



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

5-41

(1)



(1)

818

7523

Մ. Վ. ՄԱԿՍՍԻՅԱՆԸ

268

ՅՈՅԶԵՐ



(Սերմուղիսի եւ Քարգանձական)

20

ДУШЕВНЫЕ ВОЛНЕНИЯ

Стих. арх. М. Максудянца.



30% ԵՐԵՎԱՆԻ ԳԼԵՂԱԿԱՆԱԿԵՐԸ

891.99

Մ-41

Բազմ. կիթաբական գրարան Ե. Ա. Երևանցիների
Բազմ. էլեկտր-տիպ. Ն. Ա. Զրիվանցու.

1915

Վարդիկանի գրառանգ № 1.

ՀԵՂԻՆԱԿԻ ԳՈՐԾԵՐԸ

1. ՕՏԱՐ ՓՈՒՆՁԵՐ, Ա. Հիւսք, Շիւնքի բալլադաներից, թարգմ. գերմ., 1904, Դավրէժ, 20 Կ
2. ՕՏԱՐ ՓՈՒՆՁԵՐ, Բ. Հիւսք, Հաֆլզի հնգհաները, քառհաներն ու սաղիբից, թարգմ. պարսկ., 1905, Դավրէժ 25
3. ԵՐԵՐ ԳՕՏԻ, Ռուսական ձեքիաթ, Վ. Ա. Ժ ու կ ո վ-ս կ ու յ, թարգմ. սոււ., 1905, Դավրէժ, 10
4. ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ, Անդէրսէնից, թարգմ. գերման. (սպառաձ), 1905, Դավրէժ, 5
5. ՈՍԿԷ ԽԱՐԱԶԱՆ, Ա. Բանգարէից, թարգմ. յուն. (սպառաձ), 1906, Պարիզ, 20
6. ԺՈՒԺԿԱԼ ԳԻՆԵՏՆԵՐԸ, Գր. քահանայ Պետրովից, թարգմ. սոււ. 1908, Էջմիածին 10
7. Le parler arménien d'Akn (Ակնայ հայ բարբառը) լեզուարան. ուսումնասիրութիւն, 1912, Պարիզ, 4 Կ
7. ՀԱԿՈՒՆՏԱԼԱ, հնդկական պատմութեամբ, Վիասայից, թարգմ. ֆրանս. 1914, Էջմիածին, 20



Արքի Արքայա-դուստր Գր. Եր. Բարսեղյան
Վերստի Կոնստանտին
Արքայա-դուստր Գր. Եր. Բարսեղյան
Մարտիկան գրադար № 1.

✓

Մ. Կ. ՄԱԿՍՍՈՒԿԵԼՆՅ

891-99

391-99

Մ-41

1915 թվականի 29
Վ. Կոնստանտին

ՅՈՅԶԵՐ



(Մայնուրոյն եւ Թարգմանական).

20 —

ДУШЕВНЫЕ ВОЛНЕНИЯ

Стих. арх. М. Максудянца.



ԿԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

5108

30%
A II
67102

Բազու, Կիլիսիական շաքարան Ն. Ա. Երեւանցեանի.
Բաքու, էլեկտրո-տիպ. Ն. Ա. Էրիվանցովա.

1915

Հրատարակութիւն Վարդգես Ե. Գեղամեանի

Дозволено Военной Цензурой.

~~4636~~

Издание

В. Е. Кегамянца въ память покойной супруги
Варсөникъ Сергѣевны Кегамянцъ

21667



Վ ա դ ա մ ա հ
տիկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԳԵՂԱՄԵԱՆԻ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Իրքեր մի համեստ ծաղկահիւս պսակ,
Ոտոգուած երգչիս աչքի արցունքով,
Ռեքում եմ „ՅՈՅԶԵՐ“-ս, ո՛վ ազնիւ էակ,
Թարմ հողակոյտիդ խոր ակնածանքով:

Մ. Վ. Մ.

1914 սեպտ. 14 Ս. Էջմիածին.

~~SECRET~~
CONFIDENTIAL
NO FORN DISSEM

Ծաղկահասակ կնոջս՝ ՎԱՐՍՅՆԻԿԻՍ մարմարեայ մահարձանի փոխարէն ձեռնարկելով մեր երիտասարդ ու գիտնական Մ. Վ. Մաքսուդեանի «Յոյգերի» հրատարակութեան, մտադիր եմ ՆՆՐԱ սրտին ու հոգուն մօտ մի համեստ գործ կատարած լինել, մի կողմից համեստօրէն օժանդակելով հայ գաղթականներին, միւս կողմից՝ ըստ չափու կարողութեանս մեղուաջան վարդապետի իւրատեսակ բանաստեղծութեան հանդէս գալը քաջալերելով:

Թէև իմ ոյժերից վեր է քննադատի դերը ստանձնել, բայց վստահանում եմ կարծել, որ հեղինակի բանաստեղծական ձիրքը անպայման աչքի է ընկնում աւելի թարգմանական, քան ինքնուրոյն գործի մէջ:

Հէնց ներկայ հատորում գետեղուած հինգ տարբեր լեզուներից թարգմանութիւնները, ապացոյց են ոչ միայն լեզուական հմտութեան, այլև մի ընատուր տաղանդի, որով այնքան յաջողութեամբ հայացնել է կարողանում թէ՛ պարսկական հինաւուրց դերվիշի միստիք խորհրդածութիւնները և թէ եւրոպական հեղինակի ազնուագոյն մտածումները:

Բանաստեղծութիւններից շատերի տակ նշանակուած թուականների շնորհիւ հնարաւորու-

թիւն ունինք ըմբռնել այն մեծ յեղաշրջումը, որին ենթարկւել է բանաստեղծի տրամադրութիւնը, արտայայտուած թէ ինքնուրոյնների, որոնք յանգաւոր են և միօրինակ չափով, թէ թարգմանականների մէջ, որոնք զուրկ են յանգերից և ազատ են չափով: Բայց ոչ յանգի բացակայութիւնը, ոչ էլ չափի ազատութիւնը իրաւունք չեն տալիս ուրանալ ներդաշնակութեան անպայման գոյութիւնը:

Այս անսակէտից հայր հեղինակին նոյն իսկ կարելի է շնորհաւորել, որ փոխանակ կաշկանդելու իրան ընդհանուրի որդեգրած և գործադրած սկզբունքներով, իւր զգացմունքների անմիջական թելադրանքով, ստեղծում է ներդաշնակութեան նոր նմուշներ:

Ըմբռնելու համար այդ կարգի անյանգ, ազատաչափ քերթուածների ներդաշնակութեան ամբողջ հմայքն ու քաղցրութիւնը, հսկմաղթէի, որ դրանք ամենուրեք արտասանուէին անյախի շեշտով, և անյախի ոգևորութեամբ, որպիսին յատուկ է իրան հ. Մաքսուդեանին:

Ես լսել եմ այդ արտասանութիւնները և... արտասուել:

Ձեռնհաս քննադատին եմ թողնում «Յոյգեր»-ի վերջնական գնահատութիւնը անել:

Հրատարակիչ.



Ochs-ենց.

ԱՓՍՈՐՍ որ այս հէք թռչնակը
 Չունի լեզու պատմելու
 Ո՛չ իմ սրտի վառ տենչանքը,
 Ո՛չ ձեզնից լուր բերելու.

Թէև իմ սիրան, իր յոյզերով,
 Ա՛յնքան խոր է և անհուն,
 Որ, անյատակ, ինչպէս մի ծով,
 Մատչելի չէ ամենուն:

1909, Գէօտտինգէն.

* *
 *

H. H.-ին:

ԻնՉՈ՞Ւ, հոգիս, արեգական
 Նշոյլները կենսատու
 կարճատև են, մինչ յաւիտեան .
 Կ'ապրի սաւոյցն ահարկու:

Ինչո՞ւ, ինչո՞ւ կարճ է նաև
 կեանքը սիրոյ բերկրանքի,
 Մինչ անգութ է և յարատև
 Վիշտն անիմաստ մեր կեանքի....:

1910, Mer de glace-ի ճանապարհին
 (Օտ Սալուայում)

Վաղարձեռ ընկերիս՝
Լ. Պ.-իև.

Ինձ ասում են. ընկեր չունիս,
Մեղամաղձոտ ես դառել.
Հոգսերն ասես ողջ աշխարհիս
Քեզ են բաժին լուկ դառել:

Ծշմարիտ է, ընկեր չունիմ,
Բայց ունէի և ինչպէս,—
Դժբախտութեան մէջ մտերիմ,
Եւ իր մահը տեսայ ես:

Եւ այն օրից յետոյ էլ
Սիրտըս մնաց ամայի.
Այդ սրտումըս տեղ են բռնել
Միայն վշտեր թունալի:

* * *

Ինձ ասում են. վիշաը լաւ է,
Մարդ բանաստեղծ կը դառնայ.
Փառքի համար նոյնիսկ կ'արժէ,
Որ մարդ վիշա էլ ունենայ:

Ո՛ղորմելիք, իմ վշտերը
Քերթուածների համար չեն.
Նրանց մէջ կ'ապրի իմ ընկերը,
Որից այժմ էլ բաժան չեմ:

Այդ վշտերը ինձ կը պահեն,
Ես կը պահեմ այդ վշտերը.
Այդ վշտերը ինձ կը տանեն,
Որտեղ կ'ապրի իմ ընկերը:

1906 Սեպտ. 30,
Վ. Ազոպիս.

Ի Մ Վ Ի Ե Տ Ը.

Ինձ չի տանջում և ոչ մի բան,
Ո՛չ ցաւ, ոչ վիշտ աշխարհում.
Ինձ տանջում է մի միտք միայն,—
Որ աչք ունիմ, չեմ տեսնում:

Ա՛խ, թէ երբեք տեսնէի ես,
Ի՞նչ ոյժեր կան թաքնուած
Նոյնիսկ չնչին շիւղերի պէս
Ծիլերի մէջ պարտկուած,

Կամ մի ըոպէ կարենայի
Հոգուս խորքերը նայել,
Իմ ինչ լինելն հասկանայի,
Գէթ մի ըոպէ մարդ ապրել,—

Ո՛հ, ամէն ցաւ, ամէն տանջանք
Կը վերանար ինձանից.
Կեանք կը լինէր իմ վարած կեանք,
Իսկ ես՝ բարձր անասնից:

1907 յունուար 2
Վերին Ազոպիս.

ԱՐԴԵՕՔ նորից է ժպտում
 Արշալոյսը ինձ կեանքի,
 Արդեօք նորից է փթթում
 Սիրաբուս նման մի ծաղկի:

Ելևէջներըդ երգիդ
 Հոգուս խորն են թափանցում,
 Մէն մի ժպիտը դէմքիդ
 Ինձ նոր գարունն բաց անում:

Ո՛հ, թէ պատրանք չլինէր
 Քո այդ երգն ու այդ ժպիտ,
 Թէ սիրաբուս միշտ ըմբռնէր
 Սրտիս յոյզերն ու փթիթ,--

Մենք, որ ապրում ենք սրտով,
 Պիտի թերթենք միասին
 Մի գիրք, անտես էջերով,
 Որ է նոյնիսկ մեր հոգին:

Ո՛հ, թէ նորից ինձ ժպտէր
 Նոր արշալոյս նոր կեանքի,
 Ո՛հ, թէ նորից ինձ փթթէր
 Սիրաս նման մի ծաղկի:



I.

ԵՍ սիրեցի քո գեղն ու փայլ,
 Որոնեցի գգուանքներդ.
 Երազեցի սէրդ անայլայլ
 Ու աննման նազանքներդ:

Աչերդ աղու և շողարձակ,
 Ամբիժ հոգուդ հայելին,
 Ինձ ցոյց տուին սիրտդ համարձակ,
 Այնքան նման իմ սրտին:

Ու ապացի. ափսոս որ ես
 Չունիմ ո՛չ հուր, ո՛չ հանճար,
 Որ պատկերներ տայի այնպէս,
 Ուր գեղեցիկը պանծար:

II.

Բայց աւելի քան գեղդ ու փայլ
 Սիրեցի ես տանջանքներդ,
 Տոկունութիւնդ կեանքում մռայլ
 Ու մղած լուրջ պայքարներդ:

Սիրեցի ես երազներդ ու
 Չգտումդ սուրբ ճշմարտին,
 Սիրեցի ես պսակներդ ու
 Խոր պաշտամունքըդ պատուին:

Սիրեցի ես քո ցաւն ու վէրք
Ու արցունքը աչերիդ,
Հառաչանքներդ, մի մի օրհներգ,
Ու քրտինքները ճակտիդ:

Սիրեցի ես վրէժիդ շանթն
Ու որոտը ցասմունքիդ.
Սիրեցի ես կայծն աղամանդ՝
Շանթահարող նայուածքիդ:

Սիրեցի ես քո անարատ,
Յաղթանակող վեհ հոգին.
Սիրեցի ես միտքըդ ազատ
Ու թռիչներըդ ուժգին:

Սիրեցի ես մի ողջ երկին
Քո աչքերում նկարուած.
Սիրեցի ես, իմ թանկագին,
Կեանքը քեզնով զարդարուած:

Ու ասացի. երջանիկ են
Աչերն այն, որ թափեցին
Քեզ համար լոկ մտերմօրէն
Սիրոյ շիթերն առաջին:

* * *

Իմ վրձինս՝ վշտոտ սիրտս է,
Ներկըս՝ արիւնը սրտիս.
Իդէալըս՝ սէրը ինքն է,
Զուրը՝ արցունքն աչերիս:



ՈՒԶՈՒՄ ԵՄ աղօթել գեղեցկութեան տաճարում,
 Ուր ծաղիկը չի թօշնում, ուր իղձը չի մեռնում,
 Ուր հոգսից ու վշտից մատղաշ ճակտիդ չեն դիզում
 Ծերութեան խորշոմները և ոչ հերքող ճերմկում—
 Ուզում եմ աղօթել գեղեցկութեան տաճարում:

Ուզում եմ աղօթել—բազնի առաջ, ուր վառուի
 Տենչանքների, խոհերի անշէջ հուրը բոցավառ,
 Ուր հոգիս մրկուի ակնախտիդ շողերում,
 Ուր էութիւնըս կորչի արծաթափայլ ամպերում,—
 Ուզում եմ աղօթել գեղեցկութեան տաճարում:

Ուզում եմ աղօթել ո՛չ պղծուած շրթներով,
 Ո՛չ ծէսերով անիմաստ, ո՛չ խաբող արցունքով,—
 Չարատանջ ողջ կհանքիս վիրյիշումը լուռ ու մունջ
 Ե՛ւ օրհներգ է եւ փրցունք...
 * Ուզում եմ աղօթել գեղեցկութեան տաճարում:


Ուզում եմ աղօթել, երբ սոխակը նուագէ,
 Երբ առուն կարկաջէ, ծառերը երբ սօսաւեն,
 Երբ ամպերը որսան, երբ ժայռերը պատառին,
 Երբ հեղեղի շտաշից ողջ աշխարհը խլանայ,—
 Ուզում եմ աղօթել գեղեցկութեան տաճարում:

Ուզում եմ աղօթել յուսահատուածի առաջ,
 Որ բազկի մի թափով իր շղթան կը փշրէ,
 Կամ որի նայուածքը, կախադանի բարձունքից
 Բռնակալին կը շանթէ. . .
 Ուզում եմ աղօթել գեղեցկութեան տաճարում:

Ուզում եմ աղօթել արշալոյսին ու լուսնին,
Երկնքին, աստղերին, վերջալոյսի շողերին,
Թէ մրրկին, թէ շանթին, թէ ծովի փրփուրին,
Թէ ամոքիչ գգուանքին, թէ մահազոյժ ցասումին,...

Ուզում եմ աղօթել գեղեցկութեան տաճարում:

1914 Մարտ 21
Ս. Էջմիածին.



Մ Ո Վ Ա Փ Ի Ն .

Մ. Ան.-ին.

ԵՄ՝ գեղեցկին երկրպագու,
Ես՝ անհունին հիացող,
Ես՝ կապոյտին սիրահար,
Ես՝ փրփուրների կարօտած,
Ես՝ ալիքներից հմայուող,
Ես՝ լոյսերի տենչացող,
Ես՝ խուզարկու անծանօթին,
Ուղղեցի քայլերըս դէպի ավին սվկիանի:

Ովկիանն անեզր,
Ովկիանը խաղաղ,
Ովկիանը պայծառ,
Ովկիանն յաղթական մի հերոս,
Ովկիանն հզօր և վեհանձն,
Ովկիանն իր հսկայ
Շրթներն էր բաց արել
Արշալոյսի անմահական համբոյրին:

Եւ արշալոյսը չքնադ,
Արշալոյսը վարդագեղ,
Արշալոյսը ժպտուն,
Արշալոյսն ամօթղած,
Արշալոյսն, իր հսկայ
Սիրահարից վախեցած,
Իր շրթները զինեց
Ճաճանչակուռ սլաքներով անհամար:

Ու ես՝ լի նախանձով,
Լի հիացման յոյզերով,
Լի սիրով, տենչերով,
Երազների խոր ծոցից
Դիտեցի՛, դիտեցի՛
Ողջագուրանք երկուսի,
Արշալոյսի ու ծովի,
Եւ յաղթանակն ովկիանի դիւցազնօրէն
պսակուած:

Ու երանի՛ դեռ երս,
Թէկուզ օրեր, տարիներ,
Կարենայի աչերըս
Չբաժանել նրանցից,
Արշալոյսից ու ծովից,
Երանի՛ այդ պահուն
Չառնէի ձայնը ոտքիդ,
Չուղղէի աչքըս աչքիդ,
Չտեսնէի այդ աչքում
Նոր արշալոյս, նոր համբոյր,

Նոր իղձեր, նոր երազներ,
Նոր երկինք, նոր պատրանք,
Նոր ովկիան, նոր անդունդ...
Երանի... Երանի...

1914 յուլ. 29.

Դ Ո Ւ Լ Ա Լ Ի Ս Ե Ս.

Վարդգեսիմ.

Դու լալիս ես. ես տեսնում եմ գերեզմանի խոր ծոցից.
Կաթիլներն արցունքիդ աղեխարշ են և աղի.
Նրանք ջերմ ու վճիտ՝ առատ առատ թափւում են
Թրջելու քայքայուող ոսկրներըս հողի տակ.

Դու լալիս ես. հս տեսնում եմ գերեզմանի խոր ծոցից:

Դու լալիս ես. հեծկլտանքիդ արձագանգն եմ լսում ես
Սև անդունդի յատակից, ուր ապրում հմ առանց քեզ.
Դու կրկնում ես, կրկնում սիրոյ պաշտամունքով
մի անուն,

Որ իմն էր ու միայն ես կ'ըմբռնէի աշխարհում...

Դու լալիս ես. հեծկլտանքիդ արձագանգն եմ լսում ես:

Դու լալիս ես. քո արցունքից իմ հոգիս է սարսուում.
Դու լալիս ես արարչագործ վերանորոգ արցունքով.
Մեր խոհերին, մեր յուշերին, անուրջներին հի-
նաւուրց
Կեանք ես տալիս, ոյժ ես տալիս, սնունդ տալիս
քո կեանքով...

Դու լալիս ես, քո արցունքից իմ հոգիս է սարսուում:

Դու լալիս ես. գերեզմանը սարսափով է դիտում քեզ.
Քո արցունքըդ համակ լոյս է, համակ հուր է, հա-
մակ ոյժ,
Համակ խորհուրդ, համակ կամք է, ժայռեր փշրող
կամք հզոր.
Քո արցունքից անդունդն անգամ կ'աւերուի.
Դու լալիս ես. գերեզմանը սարսափով է դիտում քեզ:

Դու լալիս ես. ստուերներն ինձ են նայում նախանձով,
Եւ դարերով տանջուող հոգիների բիւր շարքերն
Ասում են մրմնջելով ականջիս. «Տեսնում ես...
Քեզ համար են զոհւում այն աչերն ու այն արցունք»:
Դու լալիս ես. ստուերներն ինձ են նայում նախանձով:


Դու լալիս ես—գիշերներն հրեշտակի արցունքով,
Աստղերի հետ և լուսնի և կամ... գլուխդ բարձին.
Դու լալիս ես առաւօտներն յուսահատի արցունքով,
Որբացած թռչնի պէս անշուք բոյնդ կորցրած.
Դու լալիս ես օր ու գիշեր աստուածային արցունքով:

1914 Մեպտ. 16
Ս. Նշմիածին.



Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

Second block of faint, illegible text, also appearing to be bleed-through.





Թարգմանութիւններ յունարէնից

(Թուով վեց)

ՆՈՒՆԴ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ՏԻԿ. ԿՈՐՆԵԼԻՍ Լ. ՊՐԷՎԷՋԻՈՏԻՍԻՆ



Ծանօթ. Այս յոյն բանաստեղծուհին Կ. Պօլսեցի է և մի ժամանակ (գուցէ և այժմ, մեզ յայտնի չէ) խմբագրում էր Կ. Պօլսումս «Վոսպորիս» անուն յունարէն ընտանեկան հանդէսը: Բանաստեղծութիւններ, արձակ և ոտանաւոր, սկսել է գրել և հրատարակել 1890-ից և շարունակում է մինչև օրս: Մեզ վրայ շատ խոր տպաւորութիւն գործել են իր արձակ գրուածները, բայց ցաւում ենք, որ դրանցից ձեռի տակ չունենք՝ առանձին հաքորով լոյս տեսած չլինելու պատճառով: Իր քերթուածների առանձնայատուկ կողմերն են՝ գունեղ և վառ երևակայութիւն, բաղմբերանգ նմանութիւններ ու պատկերներ, խոր զգացումներ և զգացումների ու գաղափարների վերին աստիճանի մեղմ և քնքոյշ արտայայտութիւն: Ոճը չափազանց բարձր է և կլասիկական. կարծես ամէն քայլափոխում զգալ է տալիս, որ բանաստեղծուհին իր ներշնչումներն ստանում է ոչ թէ առօրեայ հասարակ կոշտ իրականութիւններից, այլ իր դասական նախնիներից, որոնց լեզուն ու գործերն ուսումնասիրել է մեծ նմտութեամբ:



Մ ՈՒ Ս Ա Յ Ի Ս .

ՄՈՒՍԱ, քանզոր աստուածութիւն, քանի դեռ
շունչըս վերջին
Ձի հանգած եթերում, ինչպէս պղտոր կոհակի դանդաղ
շառաչիւն.
Քանի դեռ ճակատիս գոս դափնիներն հողի գիրկը չեն
ընկած.
Քանի դեռ ինձ կիզող ցաւն արշալոյսիս վարդերը չի
խամբած,—
Ո՛հ, երդուեցնձե՛մ եմ քեզ, մի անգամ ևս ամպերից իջի՛ր՝
Քրորմելու գէթ մի համբոյր դժգոյն ճակատիս:

Ո՛վ դու սրտիս թագուհի, աշխարհիս բիրտ շըրթ-
ներն ինձ ասացին,
Որ քեզ ուրանամ և սիրած քնարս կրակը ձգեմ.
Ինձ ասացին. որ դէն ձգեմ դափնիքս ու ոսկէ պսակ
որոնեմ.
Ինձ ասացին. «Ի՞նչ լոյս է, որ ներշնչում ես անուա-
նում».
Ինձ ասացին. «Ի՞նչ է դափնին, որով դէմքդ ես պսա-
կում:
Շուտ կը հանգի այդ լոյսը, ձմրան շունչը դափնիներդ
կը չորցնէ.
Իսկ Մուսադ՝ ամպեղէն աստուածութիւն է ունայն,

Որ պահ մի քեզ կը սիրէ, կը ժպտի ու կրկին կը հե-
ռանայ,
Ի՞նչ ես, նրա սիրուն, անհուն նայուածքդ յառել վեր-
ծած նայիր և կը գտնես երկրի ոսկին, որ քամիները
ուժգին,
Երբեք չեն տապալիլ, ոչ էլ կրակը կարող է այլայլել
Դ ի ո ս ի ո Ր դ ի ն է նա, նա ինքն է միակ գանձը
հաստատուն»:

Աւանդ, ցնցում է ինձ այս ձայնը զերդ դառըն
շունչն հիւսիսի,
Կամ ինչպէս ծանր ժխոր մրրկածին ալիքներից ժայ-
ռերին:
Հեծում է սիրտըս տխուր, կայլակում աչքս արտասուք,
Եւ հոգիս կսկծում.... ասում են—Թող Մուսայիդ:

Թող ասեն, թող ասեն մեղուին, որ ծաղիկները
թողնէ,
Արևածաղկին—ուրանայ լոյսի ճաճանչը անոյշ,
Եթերաբնակ արծըւին—ամպերն արծաթ-ոսկեղէն,
Սոխակին—պուրակի սողարթախիտ հովանին,
Զինուորին—իր սուրը, բևեռի աստղն էլ՝ նաւաստուն:
Եթէ երբեք մեղուն թողնէ իր ծաղիկներն ու թռչի
Քարերի մէջ պտրել մեղր, արևածաղիկն էլ շուռ տայ
Իր քնքոյշ երեսը կենդանարար լոյսից դէպի հող,
Կամ սոխակը լքանէ ստուերը իր պուրակի,
Կամ մարտիկն դէն ձգէ սուրն եւ, վերջապէս, նաւաս-
տին
Անհոգաբար հրաժարի ոսկի աստղից բևեռի,—
Ես էլ քեզ, անգի՛ն Մուսաս, ես էլ քեզ, թնգուհիս,
Ես էլ քեզ. ո՞վ հոգւոյս աստուածութիւնդ անձկալի,
քեզ կը թողնեմ:

Քնարըս կը նետեմ կրակի մէջ բոցավառ եւ դափնիս
քաղցրաբոյր՝

կը ձգեմ ծով, որ ալիքները տանին...:

Վայ ինձ... թէ պահ մի վարանեց միտքըս—Մոսա,
մեղայ քեզ,

Մինչ ցաւի ու դողի յոյզերն էին պատել ինձ:

Սակայն սիրաբըս հաւատարիմ՝ ինձ բեռել է սիրուդ:
Երբեք, երբեք չեմ տատանիլ, երբեք չեմ փակիլ
ականջս:

Ո՛չ, Մոսա, խո՛ր է, շատ խո՛ր, աստուածային սէրդ
իմ մէջ,

եւ մրբկի անզօր է շունչն, անզօր է ծնւն անգամ
Մարիու այն բոցն անոյշ, որ հոգուս ներսն է վառուած:

Բայց երբեք չ'սիրեցի, երգում եմ քեզ, ո՛վ Մոսա,
Մոսայապաշտ երգչի փառքը՝ այս աշխարհում հա-
խանձելի:

Այդ փառքը երազն է ո՛չ թէ հոգու վշտահար,

Այլ զուարթ, երջանիկ և ծիծաղուն սրտերի:

Ահնջ իմ դալուկ ու մեռած եւ անապատ այս կեան-
քում,

Ուր խինդերը սակաւ են, ուր սակաւ են յոյզերը,

Միակ աստղըս դժւ եղար, եւ բարախուն իմ կրծքի

Ողջ սէրն հոսեց դէպի քեզ:—Քեզ սիրեցի, ո՛չ թէ
փառք—

Քեզ՝ որպէս աստղդ, որպէս ծաղիկ, որպէս երգ, աստու-
ածային որպէս գեղ,

Քեզ՝ որպէս երկնի լոյսի ճաճանչ ոսկեղէն և գեղեցիկ.

Քեզ՝ պատանութեանս որպէս երազ, քեզ՝ որպէս բեր-
կրանքը կեանքիս,

Քեզ՝ որպէս յոյս, վերյիշում, քեզ, ամէն տեղ քեզ, ու
միայն քեզ:

Ո՛հ, երբ քնարս էլ մի օր կրժքիս սեղմած ջեր-
մագին,
Եւ գոս դափնին ճակատիս՝ անշնչացած վէր ընկնիմ,
Այն ժամանակ թող, սվ Մուսա, շիրմիս գլխին բող-
բոջող
Ուռու վրայ լուռ գիշերին մենասէր թռչնակը հեծէ,
Հեծէ անոյշ և հրքան քեզ սիրելըս ողբերգէ...
Մինչ մենաւոր, դալկադէմ լուսնակն ամպերի ծոցից
Լուռ մի ակնարկ ձյէ ցած մեկամաղձիկ և անոյշ...:



Ս Ա Փ Օ *)

ՉՔՆԱ՛Ղ պատկեր, արևը բիւր շողերով
Վերջալոյսի ոսկիներն է շաղ տալիս.
Հսկայ ժայռերն հողմի դիմաց անխուով
Նայում են ցած, որտեղ ծովն է ողբալիս:

Ոսկի ամպերն առաջանում են հանդարտ
Դէպի անհուն բարձունքները երկնքի,
Մինչ գեփիւռն հեզ սօսափում է անընդհատ,
Ու հեծում է ուռին ծովի եզերքի:

*) Նշանատը յոյն քնարերգակ բանաստեղծուհի, Քրիստոսից մօտ 600 տարի առաջ Միտիւէն քաղաքում Լեսբոս կղզու վրայ. սիրահարուած էր Փաօն անուն մի վայելչագեղ երիտասարդի վրայ, որի պատճառով եւ յուսահատուած ինքնիքան գահավիժեց ծով:

Ն. բարձրարեւրձ ժայռի գլխին լուռ կանգնած,
Դալկասպիտակ, բռնած ձեռին մի քընար,
Աչքով հրացայտ, դէմքով մռայլ, այլայլած,
Հեծեծում է Սաֆօն, Մուսան վշտահար:

Նայիր, Սաֆօ, համակուած սիրտըդ վշտով,
Քեզ է սպասում յորձանքն եռուն, ահաւոր.
Նրա մոռնչն, ինչպէս հառաչ խոր շշտով,
Քեզ ասում է. «Ընկիր, երգիչ սգաւոր»:

Գլխիդ ունիս պսակ դափնուց, մրտենուց,
Ողուել են քեզ մազերըդ արձակած.
Ձայն է դալիս մազերդ շարժող խիստ քամուց.
«Ընկիր, ընկիր, ո՛վ դու Մուսանդ վշտազգած»:

Սակայն դալար սուրին որ կայ ծովափին,
Մըմնջում է գլղխն հակած դէպի ծով,
Մըմնջում է սիւքի շնչով մեղմագին.
«Մի, Սաֆօ, մի, ետ դարձիր, ետ, շտապով»:

— Ո՛չ, գոչում է Սաֆօն, ծոփն իմ գերեզման.
Անհնար է ինձ այստեղից դառնալ ետ.—
«Սաֆօ՛, Սաֆօ՛, ցաւերդ խոր, անսահման,
Ե՛տ դարձիր, ետ, աստուածներէ սիրուն գէթ»:

Նայիր, նայիր, ծոփն ինչպէս է կատաղած,
Անդնդային, զարհուրելի մի շիրիմ.
Լսիր կոչը երկրի ծաղկով պսակած.
Մի, Սաֆօ՛, մի, մեղք ես, անգի՛ն մտերիմ:

Ներշնչումի ճառագայթը թնաւոր
Ոսկի ոսկի փողփողում է քո աչքում.
Պայծառագեղ կախուած է մի պսակ նոր՝
Գլխիդ վերև, ու քո փառքն է հռչակում:

Փայլատակում է դեռ լոյսը արևի,
Գարունը դեռ վարդեր ունի բուրաւէտ,
Եւ Հելիկոնն¹⁾ ունի դափնիք դալարի.
Աստուածների սիրուն, Սնֆօ, դարձիր ետ:

— Էլ չեմ ուզում ես վարդն անոյշ, չեմ
ուզում.

Էլ չեմ ուզում Հելիկոնեան դափնին ես.
Երբ հոգու մէջ բերկրանքը մայր է մանում,
Փառքը նոյնիսկ էլ դառնում է ցաւի պէս:

Ինձ ի՞նչ օգուտ դարնան ժպտիցը քաղցրիկ,
Գարունն ալլերս Փածնին թող ժպտի.
Նրան թող տայ իր ծաղիկները փափկիկ,
Թող անսպառ խինդերի մէջ նսն փթթի:

Բայց ափսոս որ հառաչանքիս ողբագին
Պիտի լսէ նա արձագանգը յաւէտ.
Ստուերաթև սլանայ պիտ՝ իմ հոգին
Որտեղ նա է ու միշտ ապրի նրա հետ:

¹⁾ Մուսաներին նուիրուած լեռ՝ Քիովտիայում:

Գիշերն հէնց որ անոյշ քունը հեշտական
Գայ փակելու արտեաննունքը նրա,
Հոգիս, այո, որպէս արթնն պահապան,
Նրա վրա պիտի իր թևերը բանայ:

Պիտի կքի իոգուս դէմքը օղեղէն
Մըմնջելու նրան խօսքեր սիրարծարծ.
Ու Սաֆօիս, դափնեպսակ, դալկադէմ,
Պիտի տեսնէ նա երագո՛ւմը յանկարծ:

Աչերն, աւանդ, պիտի բանայ դողալով,
Խղճի խայթից ցաւով պիտի համակուի,
Սիրտը լցուած, թևերը ինձ բանալով,
Ծինչ ստուերս պիտի փոխուի խաւարի:

Ճիշտ ինչպէս որ Տարտարոսի խաւարում
Լաերտոսի որդին¹⁾ ահով, դողալով
Անտիկլէին²⁾ իրա գիրկն էր բաց անում,
Բայց ստուերը անհետացաւ խոյս տալով:

Մնաք բարեան, գարնն, երկիր ու երկին,
Մնաք բարեան, փառքիս օրեր ոսկեղէն,
Եւ դու, Փնօն, անգո՛ւթ, բայց իմ պաշտելին,
Ընկնում եմ ծով, մնաս բարեան, Միտիւլէն:—

Աղմկեցին ալիքները փրփրած,
Հէնց որ նրանց ցուրտ գրկում նա տեղ գտաւ.
Նրա կեանքի մարեց ջահը լուսազգեաց
Այն վայրկենին, երբ Փեբոսը³⁾ մայր մտաւ:

¹⁾ Ոդիսեա. ²⁾ Ոդիսեաի մայրը. ³⁾ Արեւը:

Ժայռն ու ալիք, ուռենին ու լռութիւն,
Միահամուռ հառաչեցին տխրագին.
Ձկնկուլներն, հնարեկած ու տրտում,
Բացին թևերն ու խոյս սուին խմբովին:

Ու խաւարտչուտ երբ գիշերուայ ընկաւ քող
Այն ստուերոտ ջրերի վրայ լայնատար,
Արցունքի տեղ հոսեցին մի դալուկ շող
Հետպերոսն ¹⁾ ու Փերէն ²⁾ մտքուր ու պայծառ:

Եւ ճաճանչը արշալոյսի երբ շողաց,
Երբ բնութիւնն ամբողջ լոյսի մէջ լողաց,
Ուռենուց էլ մի սօսափիւն լսուեցաւ,
Թէ՛ «Վշտահար Մուսան այստեղ թաղուեցաւ»:

Հապա ողբը անտառաբնակ սոխակի,
Կամ մեղեդին մուսաների գեղերգակ...
Դրանց պարը ժայռի գլխին ծովափի
Յուզուած յուզուած մահուան հնչում էր նուազ...

1913 փետր. 14.



¹⁾ Գիշերուայ աստուածութիւն.

²⁾ = Լոսմնակը:

Ո Ի Զ Ո Ի Մ Ե Մ.

ՈՒԶՈՒՄ ԵՄ լինիս դու վառ արեգակ
ես՝ ցօղի մի շիթ,
Որ արշալույսի դռներէց հոսիմ
որպէս մարգարիտ,
Եւ ճառագայթը շողշողուն կրակիդ
ինձ կուլ տայ իսկոյն,
Ու ես շքանամ ու վերջին շունչըս
փչեմ քո գրկում:

Ուզում եմ լինիս դու Սիրոյ Աստուած,
ես լինիմ ծաղիկ,
Դու թռչես անցնես պեգասի թևով
դաշտ ու դալարիք:
Կը գգուես ինձ մէկ, ինձ, որ դողում եմ,
ու հանես եթեր,
Բացած ինձ համար քո հրաշագեղ
ոսկեշող թևեր:

Ուզում եմ լինել քնարի շունչը—
շունչը սրբազան,
Որ դառնում է մեր կրքերի համար
կենդանի թարգման.
Իսկ դու, անուշիկ, լինիս մի գեփիւռ,
և զմայլագին
Թև թևի տուած թռչինք ու հասնինք
անյատակ երկին:

Դժգոյն աստըդ, թէ իսկապէս
ցանկանում ես լաց լինել,
Ժպտիր մահուան ու սկսիր
կեանքի վրայ արտասուել:

Իբրև արցունք, իբրև ժպտ
թոյլ քո ճաճանչըդ տեղայ,
Մէկը միւսին թող քո միջում
հեզնէ, ծաղրէ և... գլթայ.
Թոյլ արցունքդ սգայ, ողբայ
մեր զուարթութիւնը անկար,
Իսկ ժպտող՝ թող մեր ողբի
դառնայ ծաղրը դալկահար:

Ո՛հ, եթերի դու արտասուք,
հոսիր աչքիս մէջ մի շող,
Մի անգին շող՝ դժգոյն փայլի
, կարեկցաբար սգացող.
Փախստական և մելամաղձ,
որպէս ճաճանչն աստղկան,
Իմ էլ կեանքս է դիմում մութ փոս
շիջանելու յաւիտեան:

1906 դեկտեմբեր,
Վերին Ազուլիս:



ՈՒԶՈՒՄ ԵՄ ԱՊՐԻԼ.

ՈՒԶՈՒՄ ԵՄ ապրել. թէև կեանքն ունի
Դառնութեան ժամեր, ժամեր սրբութեան,
Բայց կըգայ անշուշտ և ժամ այնպիսի,
Որ էլ կը լռէ ձայնը տխրութեան.
Կ'անց կենան ձմեռ, մրրիկ, փոթորիկ—
Կը բացուի դարուն ծաղկաբոյր, գողտրիկ:

Ուզում եմ ապրել. ո՛հ, ինչքան մարդիկ
Այս մեր ծաղկազարդ, պայծառ, գեղափթիթ
Պարտէզ աշխարհը՝ լոկ բազմապատիկ
Դառն ցաւերի կոչեցին հովիտ:
Ո՛հ, կոյր է արգեօք աչերը դրանց,
Որ չեն տեսնում շողն ոսկէ բերկրութեանց:

Երբ վիշտ ու թախիծ, փորձանքներ ամէն
Իրանց սև գրկում ինձ կը պաշարեն,
Մի ուրիշ պատկեր կ'անցնի ժպտագին՝
Սարի բարձունքից. և կը ծիծաղի
Բնութիւնն ամբողջ նրա առաջին,—
Կը փթթի զուարթ գազաթը սարի:

Ունի նա ծաղկի գոյնը դալարուն,
Ունի լոյս մարմին, թևաւոր, փայլուն,
Եւ ջինջ աչերում ցոլում է անհուն
Շափիւղանման կապոյտ ովկիան:
Եւ երգում է նա հրեշտակի բերնով.
—Ողջոյն, կը գայ և օր բարիքներով,
Ինչպէս ծագում է արփին շողերով՝
Զուարթացնել երկնային խորան:—

Եւ անուանն է Յոյս...

Արդ, ինչքանն էլ դու

Ընկճուիս կեանքի բեռից ահարկու,

Մի վհատիր, մարդ, թևերո՞վ հուժկու,

Կ'առնէ բեռն ուսիցդ Յոյսը ոսկեղէն:

Նա, ճաճանչն է Սուրբ Նախախնամութեան,

Նա է վառ աստղը հոգու սլացման,

Միակ խարիսխը ողջ կենդանութեան,

Մատղահաս սրտի խինդը դիւթեղէն:

Եղեմական այնտեղ դրախտում, ուր օրհնում են Արար-
չին,

Աստուածաշունչ սուրբ քնարով, հրեշտակները խմբո-
վին,

Ուր բիւրեղեայ կարկաշում է կենդանութեան աղբե-
րակ,

Ու շնչում են խնդաղութեան զեփիւռները մեղմորակ,

Մի ծայրումը, լի անթառամ ծաղիկներով երփնավառ,

Որ ջրում են կենդանութեան ալեակներից անդա-
դար,—

Կերպարանքով փայլակնացայտ, գոհարներով պսակուած,
Երեք ժպտուն աստուածուհիք գանձ են սփռում շնոր-

հաց:
Հրեշտակ չեն, բայց արտաքուստ հրեշտակի են նմա-

նում,
Տիրոջ կամքով իբր հրեշտակ դէպ երկիր են սլանում:

Նայուածքներն է մի-մի ճաճանչ, խօսքերը՝ տաղ երկ-

նային,
Անուններն են ՅՈՅՍ և ՔԵՐԹՈՒԱԾ և ԳԹՈՒԹԻՒՆ—
թշուառին:

Երբ անհետում է փայլակը, երբ խաւարն է թանձրա-
նում,

Երբ հառաչանքն անմեղների մինչ երկինք է բարձրա-
նում,
Դրանք, որպէս աստղի ճաճանչ, լուկ իջնում են աշ-
խարհ,
Խինդն ու անդորրն Արարչի ծաւալիլու մեզ համար:

1906 դեկտ.
Վերին Ազուլիս:

Ք Ե Ձ Ե Մ՝ Ս Ի Ր Ո Ի Մ՝

ՔԵՁ եմ սիրում, քեզ եմ սիրում, սեղմում եմ
քեզ մոլեգին

Ծաղկահասակ իմ գրկին.

Քնար է սիրտս, և լարերին սէրն է բախում ան-
ընդհատ,

Սէրը չքնանդ, անարատ:

Տուէք, ճերմակ հրեշտակներ, ձեր երկնային քը-
նարն ինձ

Շրթներիս վրայ դրոշմեցէք ձեր սաղմոսները
անբիծ,

Որ նորածիլ երգեմ սրտիս բաբախումները աշ-
խոյժ—

Ձեր անպատում մեղեդիով, մեղեդիովը անոյշ:

Ապուշ կրթած ու զարմացած՝ թող բնութիւնն
ինձ լսէ,
Արձազանգը թող երգերիս երկրի շորս կողմը հնչէ.
Թող համայուած արշալոյսն ու վերջալոյսն ինձ
լուանան

Ճաճանչներով ոսկեմամն:

Ինչո՞ւ լուռ ես, ինչո՞ւ լուռ ես, իմ պաշտելի դի-
ցուհի,
Որին ժպիտն ընծայ բերին հրեշտակները ոսկի.
Բայց շրթներդ չնաշխարհիկ եւ գերդ մուսա հո-
գեշունչ
Յարիւր երգիս՝ ախորժելի քո երգերից մի մրմունջ:

Թող համբուրեմ, թող համբուրեմ բերանդ, որից
ծորում ես
Սիրոյ մեղրը, մեղրը անոյշ, որով շուրթըս ցո-
ղում ես,—
Ինչպէս զեփիւռն է համբուրում վարդը քնքոյշ
գարնային:

Թող համբուրեմ, թող համբուրեմ աչերդ, որոնք
սփռում են
Կենդանացած իմ հոգու մէջ երկնի շողեր լու-
սեղէն.
Եւ նախանձով թող դիտեն իմ . երանաւէտ այս
վիճակ՝
Ոսկեպսակ արքաները երկրագնդի բովանդակ:

Քեզ եմ սիրում, քեզ եմ սիրում, սեղմում եմ
քեզ մոլեզվին

Ծաղկահասակ իմ գուկին.

Հոգիս բոյն է և այդ բոյնում սէրն է ապրում
անարատ,

Եւ հրճուանքով իր սպիտակ
Բախում թևերն անընդհատ:



Մ Ա Յ Ի Ս Ե Ա Ն Գ Ի Շ Ե Ր .

(La nuit de Mai)

ԱղՇրէդի դը-Միսիէ

Թարգ. Փրանսերէնից

Մ Ո Ի Ս Ա .

ԲԱՆԱՍՏԵՂԾ, *ան վինըդ և տուր ինձ մի համբոյր,
Փթթելու են շուտով բողբոջները մասրհնու .*

Այս գիշերը ծնւում է գարունը. հովերը հրկիզւելու են
շուտով .

Եւ խաշնահաւը բոյն դրած մացառներում նորածիլ՝
Արշալոյսի ծագելուն է սպասում .

Բանաստեղծ, *ան վինըդ և տուր ինձ մի համբոյր:*

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ

Այս Բնչ խաւար է հովտում...
Կարծես մի սքողած կերպարանք

Ծածանւում էր այնտեղ անտառի վրայ .
Նա մարգից էր դուրս գալիս,
Դալար խոտն էր կոխ տալիս.—

Տարօրինակ մի երազ...
Նա կորչում է, չքանում...

Մ Ո Ի Ս Ա .

Բանաստեղծ, *ան վինըդ. գիշերը մարմանդում
Օրորում է զեփիւռին իր քօղի մէջ քաղցրաբոյր .*

Վարդը, դեռ կոյս, բոռ մեղուի սաղափին նախանձոտ,
Կծկւում, մեռնում է զմայլեցնելով նրան իր վրայ .

Լսիր, ամեն ինչ լռում է. սիրունուդ համար մտածիր:
Այս իրիկուն, լորինքերի տակ, մութ ոստերում անտառի
Վերջալոյսի ճառագայթն աւելի քաղցր կերպով իր
հրաժեշտն է տալիս.
Այս իրիկուն պիտի ամեն ինչ ծաղկի. բնութիւնը ան-
մահ

Լցում է բոյրերով, սիրով ու կարկաջով,
Ինչպէս նորապսակ մի զոյգի անկողինը ուրախ:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ

Ինչո՞ւ բարախում է սիրտս այսքան,
Ի՞նչն է արդեօք իմ ներսում այսպէս յուզում,
խռովում

Եւ ինձ թողնում սարսափած:
Արդեօք դուռըս չէ՞ն բախում.
Ինչո՞ւ լամպիս կիսամեռ
Լոյսն աչերս է խողտում:
Այս ի՞նչ բան է, Տէր Աստուած,
Սարսուռ է ողջ մարմինս.
Ո՞վ է գալիս. ո՞վ է կանչում ինձ, — ո՞չ ոք.
Մենակ եմ. կէս գիշեր է.
Ո՞հ, միայնութիւն, խեղճութիւն:

Մ Ո Ի Ս Ա

Բանաստեղծ, սու վինըդ. երիտասարդութեան գի-
նին է

Այս գիշեր խմորում երակներում Աստուծոյ,
Կուրծքս անհանգիստ ճնշում է հեշտանքից.
Եւ հովերը, պառպակած, շուրթըս դրին կրակը:
Ծոյլ տղայ, գեղեցիկ եմ, նայիր մէկ:
Մթթէ դու չես յիշում մեր այն համբոյրն առաջին,
Երբ դու, դժգունած, դպար իմ թևին,
Եւ, արցունքը աչքիդ, գէպի գիրկս նետուեցար:

Ախ, ո՞վ էր, որ քեզ այն օրն սփռփեց տառապանքով
դառնագին.

Աւանդ, քիչ էր մնում, որ սիրուց մեռնէիր վաղահաս:
Այժմ էլ դ՞ու ինձ սփռփիր, ինձ, որ մեռայ յուսալով,
Ի՛նձ, որ հազիւ ապրիմ մինչև առաւօտ:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ

Այս քո ձայնն է, խեղճ Մուսաս,
Քո ձայնն է ինձ կանչում,
Ո՞վ իմ ծաղիկ, ո՞վ իմ անմահ,
Միակ ամօթղած, հաւատարիմ դու. էակ,
Որ պահում ես կենդանի դեռ քո սէրը դէպի ինձ:
Այո, դ՞ու ես, դ՞ու. իմ խարտեաշ,
Դ՞ու, սիրուհիս և քոյրըս.
Եւ ես զգում եմ, այո, որ այս խոր գիշերին,
Շրջագրեստիդ ոսկեղէն
Սահում են ճաճանչները սրտիս մէջ:

Մ Ո Ի Ս Ա

Բանաստեղծ, առ վիճրդ. ես եմ, ես, քո անմահը,
Որ տխրութիւնըդ տեսայ ու լուսթիւնդ այս գիշեր,
Եւ ինչպէս թռչնակը, իր ձագերին կարօտած,
Երկնքից գալիս եմ մօտդ, որ միասին արասսուենք:
Ե՛կ, բարեկամ, տառապում ես: Միայնութիւնն ու
տաղտուկ

Մաշում են քեզ. սրտիդ խորքում հեծեծում է մի բան.
Սիրոյ նման, որպիսին տեսնում ենք աշխարհում, մի
բան եկել է քեզ այց,—

Հաճոյքի մի ստուէր, երջանկութեան մի պատրանք:
Ե՛կ, համբուրուինք ու մեկնինք դէպ անծանօթ մի
աշխարհ:

Ջարթեցնենք ըստ բախտի արձագանգները կեանքիդ,
Պօսինք երջանկութիւնից, փառքից ու զառանցանքից,
Եւ այս որպէս մի անուրջ, պատահական, վաղանց՞ուկ:

Գտնենք վայրեր, ուր մոռանալ կարենանք.
Մեկնինք, մենակ ենք. տիեզերքը մերն է:
Անն դալարագեղն Սկոտլանդ և Թուխն Իտալիա,
Եւ Հելլադան՝ իմ մայրը՞, ուր մեղրն այնքան անոյշ է.
Արգոս, և Պտելէոն, քաղաքն հեկատոմբեան,
Եւ աստուածայինն Մեսսա, տատրակների հայրենիքը
զեղեցիկ,

Եւ գիսաւոր, փոփոխական ճակատը Պելիոնի.
Եւ կապոյտն Տիտարէս, և ծոցն արծաթի,
Որ, իր ջրերում, ուր կարապն իր դէմքն է գննում,
Սպիտակ Ոլոսոնը ցոյց է տալիս սպիտակ Կամիրին.
Ասն, մեր երգերն ինչ ոսկեղէն որորելու են երազ՝
Ո՞րտեղից է գալու մեր Թափելիք արցունքը.
Այս առաւօտ, երբ լոյսն արտեանունքիդ խփեց,
Ո՞ր սերովքէն մտախոհ, կքած սնարիդ վրայ,
Թափ էր տալիս եղբւան շրջազգեստից իր թեթև,
Ու պատմում, մեղմաձայն, իր երազած սէրերը:
Երգելով ենք յոյսը, տխրութիւնը կամ խինդը.
Շաղկերէ ենք արեան մէջ սպառազէն գնդերին.
Կախելով ենք սեղեխին սանդուղի գլխին մետաքսեայ.
Նետելով ենք քամուն փրփուրը քաջ նժոյգի.
Ասելով ենք, թէ ինչ ձեռք, երկրային տան լամպերի
մէջ անհամար,

Գիշեր ցերեկ վառում է սիրոյ իւղը սրբազան.
Գոչելով ենք Տարգուինին. «Ժամ է, անն ստուերը.»
Իջնելով ենք ծովի տակ՝ մարգարիտներ քաղելու.
Տանելով ենք այժը երկնիններին դառնանամ.
Ծոյց տալով ենք երկինքը Մելամաղձութեան.
Հետեւելով ենք որսորդին սարերն ի վեր առապար,
Ուր եղջերուն նրան նայում, պաղատում է լալագին.
Յախն սպասում է նրան. ձագերը նոր են ծնուած.
Մինչ որսորդը ծռելով բռնում, խեղդում է նրան և
սիրտը, դեռ կենդանի,
Քրտնաթաթախ շների առաջ է շարտում:

Նկատելով հնք մի կոյս, այտերը ծիրանի,
Մի կոյս, որ ժամ է գնում և նրան հետևում է մի ժպիւրհ.
Նա, կանգնած մօր կողքին, աչքն ածում է դէս ու դէն,
Ու կիսարաց շրթներում իր աղօթքն է մոռանում,
Երբ լսում է դողալով, արձագանգումը մոյթի,
Մտրակի շաշիւնը մի խիզախ ձիաւորի:
Ասելով հնք Փրանսայի հերոսներին հինաւուրց,
Որ, սպառազէն, բարձրանան կեռիքներն իրանց բրգերի
Ու յարութին տան միամիտ վէպերին,
Որ մոռացուած փառքն իրանց
Աւանդեց երգիչներին տրուբադուր:
Հագուեցնելու հնք ճերմակ՝ եղերերգութիւնը մեղկ:
Ասելով է իր կեանքը մեզ Վաթերլօի պարոնը,
Եւ թէ՛ սրքան է հնձել թշուառ հօտից մարդկային՝
Դժո չեկած պատգամաւորն յաւերժական գիշերի՝
Բլրի գլխին մի հարւածով նրան պետին խփելու:
Եւ ձեռները խաչելու սրտի վրայ երկաթի.
Գամելով հնք երգիծանքի գերանին

Եօթն անգամ վաճառուած անունը դժգոյն պարսա-
ւագրի,

Մի նախանձոտ և ապիկար սովածի, որ անյայտու-
թեան անդունդից,

Սարսուռով գալիս է նախատելու յոյսն հանճարի
ճակատին

Եւ իր շնչովն աղարտած դափնին խածնելու:
Ա՛ն վինըդ, ա՛ն վինըդ, հերիք ինչքան լոցի.
Թևերըս ինձ հանում են դէպի թարմ շունչը գարնան.
Շուտով քամին կը տանի ինձ, կը հեռանամ երկրից ես.
Դէհ, մի արցո՛ւնք. Աստուած ինձ է սպասում. ժամա-
նակ է մեկնելու:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ

Թէ ուզածըդ, սիրելի քոյր,
Մի համբոյր է սիրող շրթից

Եւ մի արցունք իմ աչքից,
Ուրախութեամբ քեզ կը տամ.
Ձը մոռանաս մեր սէրը,
Երբ երկինք բարձրանաս.
Ես չեմ երգիլ ո՛չ յոյս, ո՛չ փառք,
Ո՛չ երջանկութիւն,
Ո՛չ նոյնիսկ տառապանքը, աւանդ:
Բերանը կը լռէ,
Որպէսզի սիրտը խօսի:

Մ Ո Ի Ս Ա

Դու կարծում ես, որ աշնան նմանում եմ ես
քամոնն,
Որը մինչև գերեզման լացուկոծով է ապրում,
Եւ որի վիշտն ամբողջ մի կաթիլ ջուր է միայն:
Ո՛վ բանաստեղծ, մի համբո՛յր, ո՛հ, ես ինքս եմ քեզ
տալիս.
Խոտը՝ որ այստեղից խլելու էի,
Անգործութիւնդ է. քո վիշտը Աստուծոյ վիշտն է:
Ի՞նչ որ էլ լինի հոգսը, որին տոկում ես երկտասարդ
հասակում,
Թո՛ղ ծաւալի. այդ սուրբ վէրքը սրտիդ մէջ
Սև սերովբէները դրին:
Մեծ վիշտն է, որ մարդուն մեծ է դարձնում:
Բայց դրա համար, ո՛վ բանաստեղծ, մի կարծիր,
Թէ աշխարհում քո ձայնը պարտաւոր է համբանալ:
Ամենից յուսահատ երգերն են գեղեցիկներն ամենից:
Եւ կան անմահ իսկ երգեր, որ հեծկտանք են միայն:
Երբ հաւալուսը, երկար ճամփից վաստակած,
Իրիկուայ մառախուղին, իր եղեգնուտն է դառնում,
Սովատանջ ձագերը դէպի ծովափ են վազում,
Հէնց որ տեսնում են հեռուից իրանց հօրը ջրերի հետ
կռուելիս,
Թափ են տալիս կտուցներն իրանց վզին դուրս ընկած,

Եւ խնդութեան ճիշերով դէպի նա են վազում,
Որպէս թէ որսը պատրաստ՝ բաժանելն էր մնացած:
Հայրը հազիւ հասնում է դուրս ցցուած մի ժայռի,
Ձագերին առնում է իր պարտասած թևի տակ,
Եւ, յուսահատ խեղճ ձկնորս, տխուր նայում է երկին.
Նրա բացուած կրծքիցը արեան ուղիսեր են վազում.
Ձուր է նա պրպտել յատակը ծովերի.

Դատարկ էր ովկիանն և ասիերն՝ ամայի.
Ձագերին իբրև կեր միայն իր սիրտն է բերում:
Մոայլ և լոին, մի քարի վրայ տարածւած,
Բաժանում է զաւակներին աղիքները հայրական,
Իր վսեմ սիրոյ մէջ օրօրելով իր վիշտը.

Նա տեսնում է հոսումը իր արիւնոտ ստինքի,
Դեղևում է և կքում իր մահուան խնջոյքին,
Հարբեցած հեշտանքից, սիրուց ու սոսկումից:
Բայց երբեմն, աստուածային այս զոհի միջոցին,

Երկարատև օրհասի տանջանքիցը յոգնած,
Վախում է, որ ձագերը թողնեն իրան կենդանի:
Ուստի իսկոյն վեց է կենում, բաց է անում թևերը
Եւ, կոծելով իր կուրծքը աղաղակով վայրենի,
Գիշերւայ մէջ անյալէս է իր հրաժեշտը գուժում,
Որ ծովի թռչուններն հեռանում են ասիերից:

Եւ ճամբերդն էլ ուշացած, ծովեզերքին միայնակ,
Մահուան անցքը զգալով, խաչ է հանում երեսին:
Ճիշտ այսպէս են, բանաստեղծ, մեծ բանաստեղծները ևրս:
Թոյլ են տալիս, որ պահ մի ապրողները զուարճանան,
Բայց մարդկային խնջոյքներն, որ նրանց հանդէսների
համար են,

Մեծ մասամբ հաւալուսի այս խնջոյքին են նման:
Այս, երբ խօսում են յոյսերից ու պատրանքից,
Մոռացումից ու թախծից, աղէտներից ու սիրուց,
Այս համերգը՝ սիրտ կազդուրող համերգ չէ՝
Իրանց ճառերը նման են սրերի.

Գծում են օդի մէջ մի շլացուցիչ շրջանակ,
Բայց այնտեղ արիւնի կը տեւնես միշտ կաթիլներ:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ

Ո՛վ Մուսա, անյանգ ուրւական,
Բնւ են տուած հարցերդ.
Երբ քամին փչում է,
Աւազը գիր չի վերցնի.
Կար ժամանակ, երբ մատաղ
Շրթներս, նման թռչնակի,
Պատրաստ էին միշտ երգի.
Յետոյ, որպէս նահատակ,
Ա՛յնքան ցաւեր կրեցի,
Որ հազարից մէկն անգամ
Թէ քնարիս դպցնեմ,
Քնարըս կը խորտակուի....



Այժրեդ դը Վիվեիից

Թարգ. ֆրանսերէնից

I.

Գիզուում էին ամպերը լուսնի վրայ բոցավառ,
 Ինչպէս ծուխն է դիզուում հրդեհի երեսին,
 Եւ մինչև հորիզոն սևացել էր անտառը:
 Մենք անխօս դնում էինք մերթ տամուկ մարմանդով,
 Մերթ խտացած ցախերի*); մերթ բարձր մացառների
 մութ շաւղով,
 Մինչև հասանք հաստաբուն մայրիկների տակ ու տեսանք
 Ճիրանների հետքերը ուղևոր գայլերի,
 Որոնց մենք ձգել էինք ծուղակը:
 Ականջ գրինք, կանգ առինք, բռնեցինք մեր շունչը—
 Չկար ոչ ձայն, ոչ ծպտուն անտառում կամ դաշտում:
 Միայն բուն էր վայում իր վշտերը ողբագին:
 Քփմին, որ շատ բարձրից էր սուրում,
 Հազիւ հազ հպում էր իր ոտքերը մենաւոր բուրգերին,
 Մինչ կաղնիները ցածրում, կքած դէպի ժայռերը,
 Նիրհում էին կարծես թեքած գլուխները բարձին:
 Տիրում էր խոր լուծիւն, երբ խուզարկու
 Որսորդներիցս էն ծերը
 Գլուխը դրաւ գետնին ու զննեց աւազը:
 Նա որ երբեք չէր սխալուած այս հարցում,
 Ասաց մեղմով, որ նշանները այս նոր
 Ցոյց են տալիս քայլերն ու մագիլները ահաւոր
 Երկու մեծ գայլերի իրանց մի զոյգ ձագերի հետ միասին:
 Մենք բոլորըս հանեցինք մեր դանակները սրած,
 Եւ, ծածկելով մեր հրացանները շողուն,

*) = bruère.

Առաջացանք քայլ առ քայլ դէն մղելով ճիւղերը՝
 Երեք հոգի կանգ առան, և ես տեսնում եմ յանկարծ
 Մի զոյգ աչեր բոցավառ, մինչ դէնը, ցախերի մէջտեղում,
 Չորս կայտառ կերպարան պարում էին լուսնի տակ,
 Ինչպէս մեր աչքի առաջ մեր քերծէնները ուրախ
 Պարում են ամեն օր, երբոր տուն ենք դառնում:
 Համանման չորս կերպարան, համանման մի պարով...
 Բայց գայլի որդիքը խաղում էին անշունչ,
 Ձգալով, որ քիչ դէնը, իր որմերում պարփակուած,
 Կիսաքուն պառկել է մարդը, իրանց թշնամին:
 Հայրը ոտի վրայ էր, մինչ մայրը քիչ հեռուն,
 Ծառին յենուած, հանդչում էր նման գայլին մարմարեայ,
 Որին Հոռմն էր պաշտում, և որի կողերի տակ թաւարծի
 Հոռմուլոս և Հոռմոս դիւցադուններին էին մնում
 խանդակաթ:
 Հայրը գալիս նստում է, սրունքներն ուղղելով
 Եւ կեռածայր մագիլներն աւազի մէջ խրելով:
 Գիտէ որ կորած է, քանի որ յանկարծ էր բռնուել,
 Ընդհատուել էր նահանջը և փախչելու ճար չունէր:
 Եւ ահա բաց է անում հրաշունչ երախը,
 Եւ ամենից յանդուգն շան հեացող կոկորդիցն է բռնում:
 Ձուր են տեղում մեր գնդակներն հրեղէն,
 Ծակում, անցնում նրա մարմինը հսկայ,
 Եւ դանակները մեր սուր, որպէս արծան, չորս կողմից
 Մինչև նրա լայն աղիքները խրւում:
 Բաց չի թողնում նա գամփռին ժանիքներից իր երկաթ,
 Մինչև գամփռը խեղդամահ չի ընկնում ոտքերի տակ
 թաւալզոր:
 Գայլը նրան թողնելով նայուածքը մեզ է ուղղում:
 Դանակները՝ մինչև կոթ՝ մնում էին կողի վրայ դեռ խրած:
 Նա մեխուած էր մարմանդին, ողողուած իր արեան մէջ,
 Երջապատուած հրացանների մահադէմ մահիկից:
 Կրկին նայում է նա մեզ, ապա կրկին թեք ընկնում
 Լզելով արիւնը իր ծնօտի վրայից:

Զի հաճում իմանալ պարագաներն իր մահուան,
Փակում է աչքն ու անճիչ, անկոծ մեռնում է:

2.

Ես սկսայ մտածել, ճակատս յենած հրացանիս անվառօդ-
եւ սիրտ չարի այլևըս հալածել մնացած երեքին,
Զաւակներին և մօրը, որոնք ցաւով բաժանուեցան
նրանից:

Եւ այրին, գեղեցիկ և մռայլ, որ, կարծում եմ չէր թողնիլ
նրան մենակ մեծ փորձութեան այդ ժամին,
Ուզեց փրկել անչափահաս ձագերին,
Դաս տալ նրանց տառապանքը քաղցի,
Եւ խրատել, որ երբեք չլինեն դաշնադիր մարդու հետ,
Ինչպէս այն անասուններն ստրուկ,
Որ, մի չնչին խշտեակի փոխարէն,
Առաջ անցած որսում են
Անտառների, ժայռերի նախնական տէրերին:

3.

Վճյ մեղ, ստացի մտքումըս, իրքան թոյլ ենք եղել մենք,
Մենք, մարդիկըս, ամօթ մեզ:
Դճւք, դճւք գիտէք, ի՞նչ վսեմ գազաններ,
Թէ ինչպէս պէտք է կեանքից և կեանքի շարիքներից
բաժանուել:

Ի՞նչ է մարդս երկրի վրայ և ի՞նչ է ժառանգութիւն նա
թողնում.

Մեծ՝ լոռթիւնն է միայն. մնացածը՝ ոչնչութիւն,
խեղճութիւն:

Ո՞հ, ես քեզ լաւ հասկացայ, վայրենի՛ ուղևոր,

Գո՛ վերջին ակնարկըդ մինչև սիրտըս թափանցեց:

Այդ ակնարկդ ինձ ասում էր. «Կարճի ես

Մնալ միշտ մտադիւր, մտախոհ, մինչև հասնի քո հոգին

Ստոյիկ հպարտութեան բարձրագոյն այս կէտին,
Ուր
Քեզնից առաջ ես հասայ, ես ծնունդըս անտառի:
Հեծնել, ողբալ, աղօթել՝ վատերին են յատուկ.
Կատարիք եռանդով երկար ու ծանր պարտքըդ
Ասպարէզում, որին քեզ ճակատագիրը կոչեց,
Ու յետոյ տառապիք ու մեռիք անտրտուն՝ ինձ նման»:

1915 փետր. 3

Ըմբիածին:



Կ Ո Յ Ր Պ Ա Տ Ա Ն Ի Ն .

Օր. Սասեռննօ.-ի

Թարգմ ֆրանսերէնից.

ԱՐԵԻՆ, ասում են, փայլ ունի պայծառ,
Եւ ծաղիկները գոյներով վառ-վառ,
Ողջոյն են տալիս վճիտ առուակին.
Ասում են սոխակն, երգը բերանում,
Եւ թիթեռնիկներն, եթերի գրկում,
Ժպտում, ճախրում են ժպտով խնդագին:

Գիշերն, ասում են, երկնակամարում
Վեհ, խորհրդաւոր լոյսեր են վառում,
Որ աստղ են կոչւում հասարակ լեզուով.
Ասում են՝ նաւեր, ծովի երեսին,
Որտեղ ալիքներն հեծում են ուժգին,
Սահում են ճերմակ առագաստներով:

Ծաղիկների բոյրն, ասում են, չունի
Այնքան հրապոյր, ինչքան թերթերի
Վրայ փայլփլող երանգներն ունին.
Ասում են՝ հովիտ, բլրակ ու անտառ,
Քաղցրիկ ջրվէժն ու այգը միշտ պայծառ,
Ինչպէս նաև սար ու մարգագետին,

Ունին այնպիսի վեհ ու սրբազան
Հրաշալիքներ, անթիւ, անսահման,
Որ նրանց առաջ պէտք է ծունր գալ...
Բայց ինձ չեն ազդում ո՛չ մի թեթև վիշտ
Ո՛չ այն ծովը, որ հեծեծում է միշտ,
Ո՛չ ծաղկի գոյնը, ո՛չ շող ոսկեփայլ,

Ո՛չ սար, ո՛չ անտառ, ո՛չ կապոյտ երկին,
Ո՛չ ծառ պտղատու, ո՛չ դալար գետին,
Ո՛չ աստղ, ու արև, ո՛չ երգող թռչնիկ.
Ո՛չ... այս ամենից և ո՛չ իսկ մի բան...
Միայն, Տէր Աստուած, անխ, տուր ինձ միայն
Տեսնել մայրիկիս պատկերն անուշիկ:

1901, Թարսիզ.

Գ. Դ. Բ ա շ մ ո ն զ ի

Ռարզմ. Ուստերէնից.

1.

ՄԱՔՐԱԳՈՐԾ կրակ,
 Օրհասական կրակ,
 Ջքնանդ, տիրական,
 Շողշողուն, կենդանի:

2.

Եկեղեցում առկայծող մոմի ծայրին անաղմուկ,
 Հրդեհի մէջ աղմկայոյգ.
 Աղերսանքի հանդէպ խուլ,
 Բայց բաղմադէմ, բաղմագոյն, երբ շէնքեր ես
 կործանում.

Աշխոյժ և զուարթ և կրքոտ
 Եւ անպէս դիւցազնօրէն գեղեցիկ,
 Որ մինչև իսկ թէկուզ իմ հիւզն էլ այրես,
 Չեմ կարող չտեսնել գեղեցկութիւնդ,
 Ո՛վ գեղեցիկըդ կրակ,—
 Քեզ ձօնեցի ես երազներըս բոլոր:

3.

Դու այլափոխում ես յաւէտ,
 Դու ո՛չ մի տեղ նոյնը չես.

Դու կարմիր ես և ծխոտ,
Երբ խարոյկն ես ճարակում.

Դու ծաղիկ ես սոսկալի, թերթիկներդ բոցեղէն.
Դու կաղնի ես երկնաբերձ, ու վարսերդ պսպղուն.
Դու մերթ դողում ես իբրև մոմի բոցը դեղնագոյն՝
Քո կապուտակ իրանով:

Դու աներեր վառում ես մրրկածին փայլակում,
Փայլակում մանուշակ, սպիտագեղ, կապուտակ:
Դու յառնում ես իբրև շանթ

Որոտների ժխորում և երգիցը անձրևի,

Մերթ շեշտով բեկբեկած,

Մերթ շերտով թանձրամած,

Մերթ եթերի լոյս գրկում

Իբր մի գունդ փողփողում,

Գունդ հրեղէն, ոսկեձոյլ,

Միշտ փոփոխուն՝ միշտ կարմիր բիծերով զար-
դարած:

Դու ապրում ես գիսաւորի խոյանքում

Եւ բիւրեղումն աստղերի:

Դու Արևից ես գալիս և, իբրև լոյս արևի,

Տաք շնչով բոյսերի մէջ ես մտնում,

Զարթեցնում, նորոգում նրանց հիւթերը թաքուն,

Ու մերթ՝ իբրև կարմիր մեխակ պսպղում,

Մերթ՝ իբրև վարսագեղ հասկ ծածանում,

Մերթ՝ ձգում, տարածում իբրև հարբած որթի
ուռ:

Բարձրանում ես իբրև կայծ

Ծոցիցը խուլ մթութեան,

Եւ երկար սպասում ես ու հսկում:

Ո՞վ է այս . . . դժւ.

Մի ակնթարթում մեռնում ես.

Սակայն մինչ ապրում ես,

Զկայ ո՞չ մի գեղեցկութիւն անպէս ուժեղ, ան-
պէս պայծառ և տարօրինակ ինչպէս դժւ:

4.

է՛լի քեզ իմ ներբողելու,

Ո՞վ յանկարծահաս, ո՞վ ահաւոր, ո՞վ բազմահնար,

Քեզնով են լուկ հալեցնում մետաղները մարդիկ,

Քեզնով են և՛ կերտում և՛ դարբնում

Այնքան կարծր պայտերը,

Եւ մանգաղները հնչուն,

Որոնցով հնձում են միշտ ու հնձում.

Եւ այնքան օղերը շուշապեղ մատների,

Եւ այնքան օղերը որոնց մէջ կեանքն են կում,

Որոնց մէջ շղթայուած տարիներն են երկարում,

Եւ որոնց մէջ միայն սառն, անզգայ շրթները

Ասում են. «Սիրում ենք»:

Եւ սրքան տարօրինակ դեռ ստեղծում ես իրեր,

Ո՞րքան բարդ գործիքներ, որ սարեր խորտակեն,

Որ անդունդից ոսկու դէզեր դուրս հանեն,

Եւ հատու սուսեր, որպէսզի սպանեն:

5.

Ա՛ մենահաս կրակ, քեզ ձօնեցի ես իղձերըս բոլոր,

Ես այնպիսիս ինչպէս դու.

Ո՛հ, դու լուսաւորում, դու ջերմացնում, դու
այրում ես,

Դու ապրում ես, ապրում:

Դու հնում, օձի նման, սլացքովըդ անվերջ,

Ո՛րքան հարսներ պսակներից զրկեցիր,

Եւ, իբրև հիւր հրեղէն, սրքան յաճախ դու հնում
Սփոփեցիր ուրիշի կնոջը:

Ո՛վ դու փայլուն, ո՛վ դու կիզիչ, ո՛վ կատաղի,

Քո պայծառ բոցի մէջ քանի տարբեր խաւեր կան.

Դու վառում ես աշնանային տերևների տօնի պէս

Ոսկու փայլով յեղյեղուկ,

Մերթ ծիրանի, մերթ մթին, մերթ դալուկ:

Դու շողում ես որպէս գոհարն երկվեցեակ գոյ-
ներով:

Որպէս կոյսի սիրաբորբոք փաղաքշանքը կատ-
ուային.

Որպէս զմրուխափն ովկիանեան ալիքի՝

Ա՛յն պահուն, երբ ալիքը բեկում է.

Որպէս գարնան տերևիկ, որի վրայ ցօղիկն է
դողդոջում, երբում.

Որպէս դողգոջանքն երազուն, կանաչաւուն
կայծոռկի.

Որպէս նշողանքն երբում, շրջմովիկ հուրերի.

Կամ որպէս ամպերը վերջալոյսից բոցավառ,

Որ իրանց սուգն են սփռում մերթ վառուող,
մերթ հանգող օրերի երեսին:

6.

Յիշում եմ, ո՛վ կրակ,

Ի՞նչպէս էիր ինձ այրում այն օրը

Վհուկների, կախարդների հանդէսում,
Ուր նրանք կրակի փայլից էին սարսափում:
Տանջում էին մեզ, որ կեանքի խորհուրդն էինք
ըմբռնել,

Մեզ, հրճուողներին կէս գիշերեան շամբշում:
Բայց այն, ինչ որ մենք տեսանք,
Ով տեսնէ, էլ չի վախիլ կրակից:
Յիշում եմ,

Ո՛հ, յիշում եմ դեռևս.

Այն վառուող շէնքերը,

Ուր մենք մեզ, մենք, հաւատքի զաւակներս,

Անհաւատ, կոյր ամբոխի ատեանում

Եւ խաւարում թանձրամած,

Այրում էինք կամովին.

Ու աղօթքի ձայներով,

Ու խելայիղ կոծերով,

Երգում էինք գովեստներ

Պարգևատուին ոյժերի:

Յիշում եմ, ով կրակ, ես քեզ էր որ սիրեցի:

7.

Գիտեմ, կը՛րակ,

Դու ունիս մեզ համար մի նոր փայլ էլ,

Որ վառուելու է աչքին, երբ մ ա Ր Ի ն աչքերն
յաւիտեան.

Կայ նրանում յանկարծահաս և՛ գիտութիւն, և՛
զմայլանք, և՛ սարսափ

Հանդէպ նոր և անհուն տարածութեանց անյատակ:

Ինչի՞ համար, ի՞նչ բանից, հիվ ընտրեց դրանց,
 հիվ խլեց,
 Ո՞վ գարդարեց ճաճանչներով բազմաստեղեան
 կահերի:
 Եւ գնում եմ այս հարցերի պատասխանը լսելու:
 Ո՞հ, վերածագ, միշտ դէպի վեր սաւառնող բը-
 նութեան դու հոգի,
 Ես ուզում եմ, որ սպիտակ, անաղօտ մի լոյսով
 Շողողայ ինձ....Մահը:

1914 Նոյ. 30.

Եջմիածին.



ՍԻՐԵՆ՝ էք ինչպէս ես. նրա սիրուն տառապէլ էք
ինչպէս ես,

Հոգեմաշ վշտերով գիշերները անքուն.

Աղօթէլ էք նրան համար արցունքներով խելագար
եւ ամբողջ ոյժովը մի վսեմ, սուրբ սիրոյ:

Այն օրից, երբ նրան թաղեցին հողի տակ
եւ վերջին անգամն էր, որ տեսաք դուք նրան,
Այն օրից խորտակուէլ է ձեր աչքում ձեր կեանքը
բովանդակ,
եւ լոյսը, վերջին լոյսն, հանգէլ է ձեզ համար:

Ո՛չ, ո՛չ... դուք, ինչպէս միշտ, ապրեցաք, ցան-
կացաք,
Խրոխտաբար դիմեցիք միշտ առաջ, անցեալը
մոռացած,
եւ վերջն էլ, ո՛վ գիտէ, հեզնեցիք սառնութեամբ
Տառապանքի ու վշտի յոյգերը ամոքիչ:

Դ՛ճք, սիրուց սիրուածներ, դ՛ճք, բախտի կոյր
զաւակներ,
Չըմբռնեցիք դուք նրա սրբազան, վեհ հոգին.

Ձիմացաք, ինչպէս ես, ես յոգնածս ու հիւանդս
իմացայ,
Արժէքը այն քնքոյշ գգուանքի, այն անոյշ խը-
նամքի:

Ի՞նչի համար, չ'գիտեմ, այն սգալի բոպէին յա-
ւերժական հրաժեշտի
Դո՛ւք, դո՛ւք միայն համր վշտով կռացաք
Դրոշմելու ձեր վերջին համբոյրը բոցավառ
Նրա անշարժ, անկենդան, մարմարեայ ցուրտ
ձեռին:

Ինչի՞ համար, երբ նրան իջեցրին գերեզման,
Եւ խումբը երգում էր հանգստեան շարական,
Դո՛ւք նրա վաղահաս դագաղը ծաղիկներով պըճ-
նեցիք,
Այն ինչ ես, որպէս օտար, լոկ նայում էի հե-
ռուից:

Ո՛հ, եթէ դուք մըրկից խորտակուած իմ հոգու
Գիտենայիք ցաւերն ու խռովքը խելագար,
Կը քաշուէիք դուք մի կողմ, ճանապարհ տալու ինձ,
Որ նրա թանկագին փոսի մօտ նախ ես կանգնէի:



Ս Ի Ր Ե Լ Ո Ի Հ Ո Ի Ս Մ Օ Ց .

(Naehc der Geliebten).

Գ Ե Տ Ո Ն Ե Ր Ի

Թարգ. գեղմաներէնից

Քե՛ջ եմ յիշում ամէն առտու մայիսին,
Երբ որ արևն է փայլում.
Քեզ եմ յիշում, երբ բերկրանքով առանձին
Աստղերին եմ ես նայում:
Քեզ եմ յիշում, երբ լեռներում հնչում է
Որոտի ձայնն ահագին.
Քեզ եմ տեսնում, զեփիւռն երբոր շնչում է
Տերևներում մթազին:
Քեզ եմ լսում վերջալոյսի ժամանակ,
Երբ արտոյտն է դալլալում.
Քեզ եմ յիշում, երբ գնում է իմ նաւակ
Ալեաց վրայ մոլորուն:
Մի ենք սրտով. մահն իզուր կը յափշտակի
Սիրոյ բերկրանքը մեզնից.
Ա՛խ, մէկ հանգչեմ, ո՛վ դու արև իմ կեանքի,
Կրճքիդ վրայ այժմեանից:

Պետրոգրադ, 1899.



Ս Ի Ր Ե Լ Ո Ի Ս Մ Օ Տ.

(Naech des Geliebten).

Գեօրգե-ի

Թարգ. գերմաներէնից

Քե՞ջ եմ յիշում, նշոյլներն երբ արեգի
Ծովից են ինձ փողփողում.
Քե՞զ եմ յիշում, շողերն երբոր լուսնեկի
Աղբիւրներում են ցոլում:

Քե՞զ եմ տեսնում, երբ փողի է բարձրանում
Ճանապարհին հեռաւոր,
Գիշերուայ մէջ՝ երբոր այն նեղ կաճանում
Դողդոջում է ուղևորն:

Քե՞զ եմ լսում, երբ այնտեղ խուլ մանչիւնով
Նշում, իջնում են ալիք.
Գնում եմ յաճախ քո երգերի տեսչումով
Ծառաստանները լռիկ:

Քե՞զ մօտ եմ ես, թէ լինիս իսկ դու հեռու,
Եւ դու ինձ մօտ, սիրելիս.
Արևն իջաւ. աստղերն են արդ փայլելու.—
Երանի՛ այնտեղ էլ լինիս:

Պետրոգրադ, 1899.



1.

Լ Ի Լ Լ Ս

Ե Ր Գ.

ՁԱՅՆՆ ԵՄ լսում իմ Լիլայի,
 Իր երգի ձայնը փափկիկ.
 Ի՛մ գառնուկներ, ձեր սիրելի
 Հովուուհին է նա քաղցրիկ:

Գայիս է նա բլրակն ի վար,
 Ձեռին բոյր-բոյր ծաղիկներ.
 Ի՛նձ է փնտրում գուարթաբար,
 Մեզ է տեսչում օր-գիշեր:

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, ո՞վ իմ աչքից
 Ծածկեց անոյշ սիրուհուս.
 Ո՛հ, ցո՛յց աուր ինձ, հօ՛տ սրտակից,
 Դէ՛մքը չքնաղ դիցուհուս:

Թողէ՛ք թռչիմ, իմ գառնուկներ,
 Թողէ՛ք թռչիմ սրաթև,
 Նրա համար ընկնիմ սարեր—
 Վիշտը սրտումս յարասև:

2.


ԾՈՎՆ հանում է փուխ փրփուր,
 Բնութիւնն հեծում է տխուր —
 Սա՛ դանդաղկոտ, նա՛ կատղած:
 Ոստերն անշուք, ամայի,
 Թափ են տալիս մի առ մի
 Իրանց զարդերը դեղնած:

Ես, խեղճ տատրակըս ալբի,
 Հեռուներն եմ պալի՛
 Բոյն դնելու խաւարում:
 Անխինդ, անսէր, անարև,
 Որպէս աշնան չոր տերև,
 Միշտ խաղալիկ եմ քամուն:

Ծովն հանում է փուխ փրփուր,
 Բնութիւնն հեծում է տխուր,
 Մին դանդաղկոտ, մին կատղած:
 Եւ հեռացած քեզնից ես,
 Աչերս արցունք աղեկէզ,
 Միրտս ունի վիշտ ծովացած:

1902 ապր 24.

Թաւրիզ.



ՔԼՔՈՒԼԻ ՊԱՏՐՈՒԱԳԸ.

(Թարգմ. Պարսկերէնից).

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.

Սոյն տողերին յաջորդող բանաստեղծութեան հեղինակն է Շեխ Ֆէրիդուդին Ատտար, մի կրօնական խորհրդապաշտ փիլիսոփայ բանաստեղծ, որ ծնել է Նիւշապուր քաղաքում և ապրել մօտ 110 տարի (513 մինչև 627 — 1119—20-ից մինչև 1229—30). նահատակուած է Չինգիզ խանի արշաւանքների միջոցին, ինչպէս ցոյց են տալիս իբր տապանագրի հետևալ տողերը.

« Սպանուեցաւ Հուլաքու խանի օրով,
Նահատակուեց նահատակի սուրբ հոգւով»:

Գործը, որից միայն մի գրուագ է ներկայ թարգմանութիւնը, մի ընդարձակ գրուագ է, մի կրօնափիլիսոփայական բերթուած, որի վերնագիրն է «Մանտըկ-ուտ-տայըր» (Թռչունների լեզուն): Ամբողջ գործը մի գեղեցիկ այլաբանութիւն է, ուր գործող անձինք թռչուններն են: Պարագլուխը յոպոպն է, որ, իբրև Սողոմոնի խորհրդականը, բանաստեղծի գրչի տակ որպէս իմաստութեան ներկայացուցիչ է հանդէս գալիս:*)

*) Ըստ աւանդութեան՝ երչանիկ Արաքիայի Սարա մահանգից մի բագուհի (ըստ Ալեքսարանի՝ օղջիւոյն հատւոյն) այց է եկած Սողոմոնին մի յոպոպի ուղեկցութեամբ: Սողոմոն մտերմացել է յոպոպի հետ, խօսել է նրա հետ թռչնի լեզուով և պարգևատրել նրան մի փէճուրէ բագով, որ ակնարկուրիւն է յոպոպի փետրաղարդ կոտարին:

Գեղեցիկ է ողջոյնը, որով բանաստեղծն առաջին
անգամ դիմում է յոպոպին.

«Ողջոյն, յոպոպ, քաջ առաջնորդ Արքայի,
Պատգամաբերդ ամէն հովտաց իրաւի.

Հասար բարեաւ մինչ Սաբայի սահմաններ,
Սողոմոնի հետ խօսեցար իբր ընկեր.

Նրա գաղտնեաց խորհրդականն եղար դուն,
Իշխանական դրիր թագը քո գլխուն»

Ժողովին և ամբողջ գործի ընթացքում նախագահողն
և ուղեցոյցն է յոպոպը, որ հրաւէր է կարդում ուղեկցել
իրան գնալու Սիմորգի (սիրամարգի, իսկ տառացի
իմաստն է «եռեսուն թռչուն»), մօտ, իբրև թագաւորի,
որպէսզի սա գայ ու թագաւորէ: Սիմորգը, սոյն բա-
նաստեղծութեան մէջ ներկայանում է իբրև ճշմարտու-
թեան մարմնացում և, ըստ բանաստեղծի, Աստուած
ինքն է: Սիմորգին ոչ ոք չի տեսել: Առաջին անգամ
նա յայտնուել է Չինաստանում գիշերուայ կէսին: Իր
աննկարագրելի նազանքների միջոցին գետին է ձգել
նա իրանից մի փետուր, սրից միայն մարդիկ գաղա-
փար են կազմել և իր մասին: Արդ, գտնելու համար
Սիմորգին, թռչունները ճանապարհ են ընկնում դէպի
Չին: Դժուարին, վտանգաւոր ճանապարհորդութիւն,
որից խոյս տալու համար ամէն մի թռչուն մի պատ-
րուակ է մէջ բերում: Առաջին պատրուակը բլբուլինն
է, որին յաջորդում է յոպոպի պատասխանը և ապա
մի առակ հեղինակի կողմից: Այս երեքը, որ թարգմա-
նարար տալիս ենք, կազմում են մի ամբողջութիւն:

ԲԼԲՈՒԼԻՆ ԵԿԱԼ, ԲԻՐՈՒՄՆ արբշիւ, խելըռած,
 Անչափ սիրուց ողջ գլուխը կորցըրած:
 Բիւր ելե՛ջ, բիւրաւոր էլ իմաստներ,
 Մէն մի իմաստ ունէր գաղտնեաց աշխարհներ:
 Բացաւ բերանն, երգեց գովքը անրջոց,
 Պապանձեցան լեզուները հէգ թռչնոց:
 Ասաց. «Ե՛ս եմ սիրոյ ըսկիզբն ու վախճան,
 Գիշեր ցերեկ սէր եմ երգում, սէր միայն:
 Ձրկա՛յ արդեօք Գաւթի նման մի սիրող,
 Որին սիրոյ սաղմոսն երգեմ սիրտ էրող.
 Իմ երգիցն է հեծեծանքը սրնգի,
 Իմ ողբն է, որ սազը տխուր կը կրկնի:
 Ո՞վ է լցնում վարդաստանն իր ճիշերով
 Կամ սիրողի սիրտն յոյգերով, տենչերով.
 Ամէն վայրկեան յայտնում եմ մի նոր գաղտնիք,
 Ամէն վշտի ունիմ ուրոյն մեղեդիք.
 Ամէն անգամ, երբ սէրն հոգուս բռնանայ,
 Հոգիս ցասկոս մոնչող ծով կը դառնայ:
 Իմ մոռնչներս հանճարն անգամ թէ լսէ,
 Հարբածի պէս իր գլուխը կը կորցնէ:
 Ձմեռն ամբողջ, երբ չեմ տեսնում սիրածիս,
 Սուգ եմ մտնում, ընդհատում թելն երգածիս,
 Այնինչ գարնան, երբ ողջ բնութիւնն է պատում
 Սիրելուհուս մուշկ բոյրովը անպատում,
 Իմ էլ սրտից, որ բանում եմ իր առաջ,
 Վերանում են և՛ տանջանքներ և՛ հառաչ:
 Այո՛, այո՛, սիրելուհին երբ չկայ,
 Բլբուլն ի սուգ, նրա բերնում երգ չկայ.

Որովհետև վարդն է միայն բլբուլի
Գաղանիքների թափանցողը լի ու լի:
Վարդի սիրոյ խորն այնպէս եմ ես թաղուած,
Որ բովանդակ էութիւնս եմ մոռացած:
Վարդի սիրուն էրուելս արդէն շատ իսկ է,
Իմ ուզածքս թարմ ու քնքոյշ վարդն իսկ է.
Ես անգոր եմ երթալ ոտքը Սիմորգի,
Թողէք սիրտըս վարդի սիրով մորմոքի:
Հարիւրթերթեան երբ լինում է սիրուհիս,
Ամէն շարից ազատում է հէգ հոգիս:
Վարդն, որ այսօր սրտագրաւ փթթեցաւ,
Հրճուանօք նախ իմ երեսիս ժպտեցաւ.
Քողը գլխից նա՝ հէնց որ դէն է տանում,
Ժպիտն իսկոյն իմ դէմքիս է ցոլանում:
Ա՛րդ, կարճիկ է մի գիշեր իսկ հեռանալ
Հէգ բլբուլն ու ժպտող շուրթը մոռանալ»:

ՅՈՊՈՊՆ ասաց. «Ո՛վ դու տեսքի հետամուտ,
Ըզգուշացիր սէրերից այդ անօգուտ.
Ձքնաղ վարդի փըշերից դու վիրաւոր՝
Սրտումդ ունիս միայն վշտեր բիւրաւոր
Վարդն ինչքան էլ գեղեցիկ է և չքնաղ,
Հրապոյրը շատ-շատ եօթն օր է, աւանդ:
Ա՛րդ, սէրն այնքան ողորմելի մի բան է
Որ լուրջ սրտի տաղտուկին չէ արժանի:
Վարդի ժպտից, որ տիրել է քո սրտին,
Գիշեր ցերեկ արտասուում ես լալագին.
Բայց ինձ լսիր, վարդն, որ բացւում է գարնան,
Զի ժպտում քեզ, ծիծաղում է քո վրան»:



Մի թագաւոր մի լուսնագեղ դուստր ունէր,
Տեսնողների սիրտը սիրուց կ'արիւնէր:
Կիրքը արթուն նրան էր միշտ պապակում,
Մինչ նա գինով իր աչերը չէր փակում:
Դէմքն էր քափուր, հերքն իբրև մուշկ էր աճում,
Շրթներիցը սուտակն էլ էր սամաչում:
Իր գեղից որ մի շամանդաղ իսկ ցոյց տար,
Հանձարն անգամ հիացմունքից կը դողար-
Իսկ շաքարը թէ նրա շրթանց համն առնէր,
Ամօթիցը կը հալէր կամ կը սառէր:

Յանկարծ մի օր մի դէրվիշ անց կենալիս,
Աչքը ընկաւ այս լուսատու լուսնակիս-
Դէրվիշն ունէր ձեռին բռնած մի կէս հաց,
(Միւս կէսը հացապանն էր գողացած):
Հէնց որ աչքը ընկաւ լուսնի այտերին,
Չուարեցաւ, վէր ձգեց հացը գետին:
Աղջիկն անցաւ կրակի պէս առջից,
Անոյշ-անոյշ ժպտաց սիրուն այտերից-
Խեղճ դէրվիշը հէնց որ ժպիտը տեսաւ,
Արիւնաշաղ իսկոյն գետին փռուեցաւ:
Ողորմելուն կէս հաց մնաց, կէս հոգի,
Ենթարկըւեց այսպէս կրկին զրկանքի-
Գիշեր ցերեկ չէր մօտենում քունն աչքին,
Շունչ չէր առնում լաց ու կոծից դառնագին-
Արքազնուհու ժպիտն էր լոկ միտ բերում
Եւ աչերից աղի արցունք անձրևում:

Այսպէս գժուած ֆնաց ուղիդ եօթ տարի,
Շների հետ փողոցումը իր եարի:

Նաժիշտներն ու ծառաները աղջրկան,
Նկատեցին, զարմացան ու զայրացան.
Եւ վճռեցին, որ դէրվիշին խիստ դատեն,
Նրան վառուող մոմի նման գլխատեն:

Ծածուկ կանչեց աղջիկն իր մօտ դէրվիշին,
Ասաց. «Ա՛նխելք, ո՞վ կը տայ ինձ քեզ պէսին.
Վեր կաց գընա՛, քանի գլուխդ վրագ է,
Թէ չէ՝ շուտով սուրը գլուխդ կը հատէ»:

— Դէրվիշն ասաց. «Ես այն օրից եմ մեռած,
Որ օրից որ սիրտըս սիրուցդ է էրած.

Թէ ինձ նման բիւրաւորներ էլ զոհուին,
Գեղեցկութիւնդ արժանի է այդ զոհին»:

Բայց այժմ որ սպանուելու եմ ի զուր,
Մի հարց ունիմ. պատասխանը խնդրեմ տուր.

Ինչո՞ւ դու ինձ ժպտեցար այն ժամանակ,
Քանի որ գլուխս ընկնելու էր թրի տակ»:

— Աղջիկն ասաց. «Որ տեսայ թէ գժուեցար,
Ծիծաղս եկաւ, ծիծաղեցայ հեգնաբար.

Ես քեզ վրայ միշտ կարող եմ ծիծաղել,
Բայց քեզ ժպտել, ինձանից մի սպասիլ»:

Ասաց աղջիկն ու ծուխի պէս վերացաւ,
Մինչ դէրվիշը հոգին փչեց, վերջացաւ:

1910 փետր. 26.

Փարիզ.



ՊԱՐՍԿԱԿԱՆ ՔԱՌԵԱԿՆԵՐ

Գէթ մի բոպէ քո կրքերին թէ իշխես,
Մարգարէի ողջ գիտութեան կը տիրես.
Այն դէմքն անտես, որ ողջ աշխարհն է խնդրում,
Դու քո մտքի հայելու մէջ կը դիտես:

Սիրույների կրօնում կան այլ կարգեր,
Այս անապակ գինին կը տայ այլ բարքեր,
Այլ է ուսումն ինչ որ ուսար դպրոցում,
Այլ է ինչ որ երբ քո սրտում զգաս սէր:

Խոստովանիր, որ սէրն ընտիր մի բան է,
Որ չարիքը վատ բնութի նշան է.
Դու քո կրքին սէր անունն ես դրոշմած,
Անցքը կրքի ու սիրոյ մէջ շատ լայն է:

1911. Փարիզ.

* * *

Ես հարբած եմ, բայց էն կարմիր գինուց չէ.
Գինուս բաժակն համակ սէր է, ոսկուց չէ.
Դու եկել ես, որ իմ գինին թափես ցած,—
Ես հարբած եմ, բայց քո տեսած շիրուց չէ:

Զաչաչ-եղ-դիմ Մաուրեվի:

Գէտտինգէն, 1908.

Վարդերից օր մ՝ հանում էի վարդաշուր,
Կրակի մէջ մի վարդ տեսայ դալկաթոյր.
Ասացի. մեղդ ի՞նչ էր որ քեզ էրում են,—
Ասաց. «Այգում պահ մի փթթելս քաղցրաբոյր»:

—

Սիրտըս սիրուդ ճանապարհն է ճանաչում,
Դարդիցդ ի գատ նրան ոչինչ չի տանջում.
Սրտիս դաշտը դառաւ սիրուցդ անապատ,
Որտեղ այլևս էլ ոչ մի իղձ չի աճում:

—

Զեփիւտիցը հէնց որ սիրալըս բոյրդ առաւ,
Ինձ թողեց ու քո տան ճամբէն ձեռք առաւ.
Այժմ իսպառ ինձ արել է մտահան,—
Բոյրիդ հետը կարծես բնոյթդ էլ առաւ:

—

Աշխարհազարդ արև ես դու ամենին,
Գիշեր ցերեկ իղձ ու անչանք ամենին.
Թէ այլոց հետ ինձանից լաւ ես, վայ ինձ,
Իսկ թէ ինչպէս ինձ հետ ես, վայ ամենին:

—

Ե՛ւ հարբում ենք և՛ երկիւղած ձևանում,
Ե՛ւ կեանք սիրում և՛ հանդերձեալ դաւանում.
Կրօն և կեանք—Երբ են հաշտուել իրար հետ,
— Ուստի կրօնից, ոչ կեանքից ենք համ առնում:

Ես իմ ձեռով դրի կրակը իմ կալ,
Զուր չէ այլևս թշնամուս դէմ տրտնջալ.
Ի՞նչ թշնամի, ես ինքս եմ ինձ կործանում,
Պէտք է վայն ինձ, կրակիս ու ձեռիս տալ:

Արու Սայիդ Միհնէ.

1908. Գէոտտինգէն.

Հէնց որ մարմնից մեկնին հոգիք իմ և քո,
Մի գոյգ աղիւս մահարձանն է իմ և քո.
Ապա այլոց շիրմին երբ պէտք գայ աղիւս,
Մի հնոցի մէջ կ'ածեն հողն իմ և քո:

Մի շեխ ասաց մի պոռնիկի—այ հարբած,
Օրէնը մէկ մի նոր ցանց է քեզ պատած.
Ասաց. — այ շեխ, ինչ որ ասես, ես այն եմ,
Բայց դու ես այն, ինչ որ դու ես քեզ կարծած:

Մենք հոպիտ ենք, Աստուած հոպիտ խաղացը-
նում,

Իսկապէս որ, իբր օրինակ չեմ ասում.
Խաղում ենք նախ բեմի վրայ գոյութեան,
Ապա մէկ-մէկ ոչնչի արկղը փակում:

Գինեմոլ եմ, թող ոչ ոք չը զարմանայ,
Թէ խելք ունի, խնդրի հոգին հասկանայ.
Գինի խմելս Աստուած գիտէր սկզբից, —
Թէ չխմեմ, Աստուած տգէտ կը դառնայ:

Սիրտըս գերի—խղճա՛, Ա՛ստուած, Դու նրան,
Հոգիս տրտում—խղճա՛, Ա՛ստուած, Դու նրան.
Ներքի՛ր ստքիս, որ գնում է գինետուն,—
Ձեռս բաժակին—խղճա՛, Ա՛ստուած, Դու նրան:
Խայալ

1907, Գեօտտինգլն.

* * *

Ձեմ իմանում, ինչո՛ւ մարդ որ պիտ' մեռնի,
Պա՛տանքից զատ հետն էլ ոչինչ պիտ' տանի,—
Թէ ինքն իրան, թէ սիրելուն է տանջում
Գանձի համար, որից ոչինչ շահ չունի:
Ջանաչի Արսասանի.

* * *

Ո՛վ դու կազմածը շողախից հակատարր,
Է՞ր վանել ես մահը մտքիցը իսպառ.
Գիտե՞ս, ինչ են քո այդ պատկերն ու այդ շունչ.—
Մի բուռը հող ճամբի վրայ հողմավար:
Մօլլա Կասիմ Մեշեղի.

* * *

Լսիր, զանգուածըդ չորս տարբեր տարրերից,
Ի՛նչ են ձայնում քեզ հոգևոր աշխարհից.
Ե՛րև մի դև ես, գազան և մարդ և հրեշտակ,
Ո՛րն որ յաղթէ, այն ես դու այս քառեակից»:

Ափզել.

* * *

Ով իր աչերն արցունքով է ողողում,
Կեսնքի հունձից աւելի է հասկ կորզում.
Ե՛րիտասարդ, լսց, քանի դեռ կարող ես,
Գարնան անձրևն ուրիշ արդիւնք է յորդում:

Միւ Արու-Թաշէք Թօրշիզի.

* * *

Մէն մի ծաղիկ, որ զարդն է այս ծաղկոցի,
Դիտես՝ վարդ է, քաղես՝ փուշ է, կը խոցի.
Ջահը հեռուից դիտիր, մօտը մի գնալ,
Լոյս կ'երևայ, բայց բնոյթն է հնոցի:

Բէհա'ի Ամօլ.

Աւանդ, կեանքուժս ինչ որ լաւ էր, անց կացաւ.
Շրջանը, ուր սիրտս ուրախ էր, անց կացաւ.
Երիտասարդ սրտի գարնան քննոցը օրերը,
Ձերդ մի շողիւն, գերդ վարդի բոյր անց կացաւ:

Սէյժ-եղ-դիւն Էսժէրէնզի.

1911, Փարիզ.



Ո՞րք, օրիորդներ, շտապում էք խառնե՞րամ և հապճե-
պով,
Ո՞ր էք վազում ձեռներըդ լի մայր բնութեան տուր-
քերով.

Նաւասարդի մէկն է այսօր և գնում էք տօնելիւ
Միրզ ու ծաղկով շքեղ տօնը Ամենաբեղ Աստըծու:
Հայ աշխարհի բնութիւնն հարուստ, դաշտորայքն են
ծաղկազարդ,

Այգիները խաղողով լի, հողն արգաւանդ և պարարտ.
Եւ դուք, չքննող հայ օրիորդներ, ծաղիկներից այդ
սիրուն

Պսակներ էք բոլորելու Ամենաբեղ ձեր տիրուն.
Թէ դուք քնքոյշ ձեր մատներով ածելու էք լի ու լի
Ձեր սիրասուն եղբայրների բաժակներում հին դինի.
Թէ սեղան էք պատրաստելու Ամենաբեղ Աստըծուն,
Որ նա սփռէ իր հովանին ձեր բարեբեր արտերում:

Աձէք, քոյրեր, ահա եկան ձեր եղբայրները
յոգնած,

Ձիարշաւից, մրցումներից հանգստութեան կարօտած:
Կազդուրեցէք ձեր տաք շնչով դուք նրանց խոնջ բա-
զուկներ,

Տուէք նրանց, տուէք գինի, տուէք և քանդցր համբոյրներ:
Որ Աստուածն էլ Ամենաբեղ, խնամակալն հայ երկրի,
Տեսնելով ձեր սէրն անարատ՝ հոգով ցնծայ ու բերկրի:
Երգիչները հայ աշխարհի, տաղանդաւոր և հա-
մեստ,

Հին դիւցազանց մեծ գործերին անվերջ կարդում են
զովհետ.

Յիշում են նրանք իրանց երգում անուններ Հայկ ու
Արամ,

Տիգրան, Վահագն ու Արտաշէս և նրանց փառքն ան-
թառամ.

Շուք են տալիս ամանորի հայրենաւանդ հին տօնին,
Եւ դովում են ամէն ուղբեր հայրենեաց հետ կապունին:
Գովում են նրանք հայրենասէր քաջ զինուորին անձ-
նուէր,
Հայ տանտիկնոջ, հայ պատանուն, հայ մշակին ջանա-
սէր:
Եւ, երգելով փառք ու պատիւ Ամենաբեղ Աստծուն,
Հայ աշխարհի բնութեան համար նրանից խնամք են
հայցում:
Հայ օրիորդներ, պսակեցէք դուք ճակատն հայ
երգողի,
Որ յաւիտեան նա իր երգում ձեր անունը ներբողի:

Արեգակը հորիզոնում փողփողում է տօթագին,
Եւ, մրգերով շրջապատուած, ահա ժպտում է բազինն,
Ուր քրմերը միաբերան երգում են փառք ու պատիւ
Ամենաբեղ մեծ Աստծուն ամանորի այս առթիւ:
Եւ խմում են մարդիկ գինին բաժակներով լի ու լի,
Եւ ասում են, և պարում են խմբերով, ու մի առ մի:
Քրմապետը ձայն է տալիս, գինու բաժակը ձեռին.
«Հայ ժողովուրդ, երկրպագիր դու քո տիրոջ սեղանին.
«Մն, ասում է, քեզ պարզեց պայծառ երկինք, յորդ
անձրև,
Սա խնայից քեզ կարկուտից, ծագեց քեզ լոյս ու
արև»:
Եւ ժողովուրդը գոչում է, բազուկները տարածած.
«Օրհնեալ լինի Ամենաբեղ Աստուածը մեր միշտ զը-
թած»:
Եւ քրմերի դասակարգից մի երկրորդ մեծ պաշ-
տօնեայ
Ձայն է տալիս, ձեռին բռնած զինու բաժակը ոսկեայ.
«Հաւատարիմ հայ ժողովուրդ, կրօնասէր ու ջերմհոանդ,
Սմում եմ այս քո իսկ կենաց, որ հինաւուրց այս ա-
ւանդ

Անխախտ պահես և դարերով ժառանգութիւն միշտ
 թողնես
 Զաւակներիդ, որ նրանք էլ գտն կատարեն այս հան-
 դէս:
 Քո աշխարհը, հայ ժողովուրդ, կանգուն մնայ յաւի-
 տեան,
 կանգուն մնայ քո տունն ու տեղ, քո այգին ու ան-
 դաստան.
 Եւ, ինչպէս քո հողի վրայ բուսած ծառերն ու ծաղ-
 կունք,
 Մնաս և դու մշտադալար, չտեսնես ցաւ ու արցունք:
 Լոեց ճառը պերճախօսի. միաբերան ձայն տուին.
 «Կեցցէ յաւէտ մեր վեհ կրօն, որ մեր նախնիք մեզ
 թողին:»
 Եւ խանդավառ բերկրանքով լի համբոյր տուին մի-
 միանց՝
 Քաջ համոզուած, թէ կրօնն այդ մնալու էր միշտ անանց:



Անցան դարեր, կործանուեցաւ հայ բազինը հը-
 նօրեայ,
 Բայց ոչ երբեք մոռացուեցաւ ճոխ պաշտամունքը նորա.
 Տասնեակ դարեր երկարածիգ կատարուեցաւ շարունակ
 Հայ աշխարհում ամանորի սոյն հանդէսը փառունակ:
 Դարեր երկար և անընդհատ հայ կոյսն ու հայ պատանին
 Պճնուեցան պսակազարդ՝ ամանորի այս տօնին:
 Մոռանում էր հայ մշակը իր քրտինքն ու տառապանք,
 Ողջունելիս նորեկ տարուն ստանում էր և նոր կեանք.
 Կազդուրում էր հայ զինուորը պատերազմում վաս-
 տակած.
 Հրճում էր հայ ընտանիքը իր սրբութեամբ հոչակուած.
 Հրճում էր և հայ տէրտէրը, յաջորդը հին քրմերի,
 Թէպէտև ոչ մեծ գիտնական բայց հաւատքումն ան-
 թերի:

Եւ երգիչը հայ աշխարհի անցեալի դովքն էր կարգում,
Եւ ամբողջից դիւցազնական դափնիներով պսակւում:

Անցան սակայն, անցան անդարձ և այդ դարերն
երջանիկ,
Եւ տեսնում եմ այժմ իմ առաջ ես մի սգուոր հայրե-
նիք:

Նա հեծում է, նա ողբում է հարուածներէց օտարի,
Ասպարէզ է դառել տխուր՝ հալածանքի, աւարի:
Հալածւում է հայ տէրտէրը, հաւատարիմ իր կոչման,
Աւերում է հայ տաճարը իր զարդերով սրբազան.
Հալածւում է հայ պատանին երկրէ երկիր տարագիր,
Հալածւում է հայ մշակը իր որդւոց հետ սգակիր.
Հալածւում են մատաղերամ և որբացած հայ մանկունք,
Չունին նրանք հայր ու մայրիկ, անվերջ թափում են
արցունք.

Հալածւում է և պատիւը պարկեշտասուն հայ կոյսի,
Է՛լ տէրը չէ նա սիրասուն քաջ տղամարդ իր փեսի.
Մոռացուել է ամանորի պաշտամունքը ցնծալից,—
Ա՛խ, ո՞վ կարող է աչք բնալ այլևս արիւն արցունքից:—
Եւ երգիչը հայ աշխարհի, մոայլ թախիծը դէմքին,
Պատմում է իր հայրենիքի ցաւն ու վիշտը ամենքին.
Աշխարհներ է թափառում նա, կտրում է ծով, ովկիան,
Որ իւր ողբով ու երգերով քար սիրտն յուզէ մարդ-
կութեան...

Օ՛ն, սիրելի հայ օրիորդներ և դուք հայոց պա-
տանիք,
Թէ սիրում էք, որ նորոգուի ձեր կիսաւեր հայրենիք,
Թէ սիրում էք, որ դարերով անմահ մնայ ձեր անուն,—
Ուխտեցէք արդ նրան մի օր զոհել ձեր սիրտն ու արիւն:

1901 դնկս. 11

Թաւրիզ.

(Կարդացուած Արամեան դպրոցի աշակեր-
տական հանդէսում 1902 յունուար 1-ին)

Նուէր հայրուկներին:

ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՆ հսկայ շէնքեր,
 Սիւնազարդ և հոյակապ,
 Մաղրում ամէն փոթորիկներ,—
 Մըրիկ, կայծակ, հուր, տարափ:

Եւ ապրում են այն շէնքերում
 Ողորմելի էակներ,
 Որ ստուերից են սարսափում,
 Դառած բախտի ստրուկներ:

Կ'անցնին օրեր և եղկելի
 Այս էակներն էլ կ'անցնին,
 Իսկ շէնքերը յաջորդների
 Համար կը մնան լոկ բաժին:

Հերոսներ են, որ չեն դողում
 Ո՛չ հրից, ո՛չ երկաթից,
 Որ աշխարհի փառքն են ծաղրում
 Բարձր կանգնած եւ փառքից:

Եւ ապրում են ո՛վ գիտէ ո՛ւր
 Հիւղակում թէ բացօթեայ,—
 Սարի զաւակ, գրկում են հուր,
 Երբ վտանգը մօտենայ:

Կ'անցնին դարեր և ամէն շէնք
Կ'ընկնի հողի հաւասար,
Իսկ հերոսի անուան օրհնենք
Կ'երգեն մարդիկ դարէդար:

1906 Յոկտ. 1

Վ. Ազուլիս



Դ Ի Պ Ի Վ Ե Ր.

Թէ կեանքդ անխորհուրդ չես կարծում, ընկեր,
Յառիր աչերըդ միայն դէպի վեր.
Ցած նայել նոյնն է, թէ առնես դադար,
Կամ դառնաս ախտեղ, որտեղից եկար:

Ինչ որ կայ չքնաղ, մեծ ու կենսաւէտ,
Վերը, Եթերում կը գտնես յաւէտ.
Արեգակ, լուսին և աստղեր անթիւ
Վերեւից են քեզ ժպտում, իմս ազնիւ:

Եւ իդէալն էլ սուրբ ճշմարտութեան,
Ցանկալի, վսեմ, անմնաց յաւիտեան,
Նա էլ ապրում է, վեր, աւելի վեր,
Քան ուր ապրում են արև ու աստղեր:

1906 Յոկտ. 2

Վ. Ազուլիս

* * *

ԱԶՈՒՐՆԵՐԸ Կը նմանին
 լճակի մը պաղպաղուն,
Ուր կը ցոլայ գարնանային
 կապոյտ երկինքը անհուն:

Ուր կը ցոլայ, ուր կը փայլի
 Պատկերն անոյշ սոխակին,
Որ սէր կ'երգէ և կը նայի
 Ծառի բարձրէն լճակին:

Երզանիկ են երկինք, սոխակ,
 Որ կը ցոլան լճին մէջ.
Ես եմ անբախտ, կոյս անուշակ,
 Որ չեմ ցոլար աչքիդ մէջ:

1899 ապրիլ 2.
Էջմիածին



Չ 0 Ն

Ձեզ, անմահ ծաղկողներ,
Որոնց կոթողները փառքի
Դարաւոր փոշիների տակ անգամ
Քան աղամանդն աւելի ջինջ են փայլում.

Ձեզ, քրձազգեստ՝ ուխտեալներ,
Որ խուցերի մենութեան մէջ,
Ոյժովը ձեր հանճարի,
Յաւերժակա՛ն գեղեցկութեան կերտեցիք նոր
տաճարներ—

Արշալոյսի շողերով,
Մոխակների երգերով,
Ծաղիկների բոյրերով
Ու վեհութեամբ երկնքի.

Ձեզ, պաշտելի հոգիներ,
Մոռացուած դարաւոր տանջանքների ժխո-
րում
Գերութեան, աւերի ու արեան
Միշտ նշաւակ այս ցեղից.

Ձեզ, մագաղաթի ու վրձնի,
Թղթի, դեղի ու փետրի,
Որդան կարմրի ու սսկու,
Երկնահանգոյն կապոյտի
Պանծալի՛ վարպետներ.

Ձեզ, խոհերի ու ճգնութեան հեզահամրո՞յր հրեշ-
տակներ.

Ձեզ, համբերութեան, տոկունութեան անմրցելի՛
հսկաներ.

Ձեզ, զրկանքի, հալածանքի յաղթապանձ հերոս-
ներ.

Ձեզ, ճաշակի ու սրբութեան անձնագոհ փրկիչ-
ներ.

Ձեզ, զմայլանքի, տենչանքների ծովածաւա՛լ
հրձիգներ.

Ձեզ, հայ մուսայից պսակուանձ սուրբ քուրմեր.

Ձեզ, Ձեր իսկ կանգնած բազնի առաջ,

Ձեզ է ձօնուում այս երկը *)

Հիացման ու սիրոյ արցունքի

Պատարագով կենդանի

Եւ լոյսովը Ձեր փառքից

Շլացած աչքերի:

1914. փետր. 14.

Ս. Եղմիածին.

*) Հեղինակի մանրանկարչական մի գործը, որ դեռ լոյս չի տեսած:



Ինչ մի ողբաք, որ տանջւում եմ
Այս մութ բանտում շղթայուած,
Ուր ամէն ժամ մտածում եմ՝
Ե՛րբ կը մեռնիմ չընկճուած:

Ինձ մի ողբաք, որ մարդկանցից
Մոռացուել եմ մինչ իսպառ,
Որ ինչքան էլ հոգւով ամբիժ՝
Համարւում եմ մի թշուառ:

Ինձ մի ողբաք, թէկուզ վաղն էլ
Բարձրացնեն կախաղան,
Եւ խմբուին մահըս ծաղրել
Ոսոխներըս անարժան:

Ինձ մի ողբաք... ես ազատ եմ,
Ազատ, թէև շղթայուած.
Ձեզ էլ մահովս ես կ'ազատեմ
Ազատների՛դ մոլորուած:

Ես ազատ եմ կապանքներից
Միտք կաշկանդող բռնութեան,
Ազատ ամէն պատրանքներից՝
Քննել գաղտնին բնութեան:

Ես շնչել եմ, ես ապրել եմ
Իբրև մի մարդ աշխարհում.
Տանջուել եմ, տառապել եմ
Նպատակիս սուրբ շաղիում:

Ես ազատ եմ, ազատ մտքով
Սլանում եմ մինչ երկին.
Տիեզերքն իր անհուն տեղով
Նեղ է գալիս իմ թռչին:

Ինձ մի ողբաք.... թէև բանտում,
Ազատութիւն կայ սրտումս.
Ձեզ ողբացէք, որ չէք տեսնում
Գերութիւնը բանտից դուրս:

1906 սեպտ. 26
Վ. Ազուլիս.

* * *

ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ. «Ի՞նչ ես արել,
Որ հեծում ես շղթայի տակ».—
Մի մեծ ոճիւր — խոստովանել
Ճշմարտութիւնն համարձակ:

1906 սեպտ. 27
Վ. Ազուլիս.



(Առակ).

Մի ձկնորսի ուռկանում
 Մի փոքրիկ ձուկ է ընկնում,
 Դեռ ևս անփորձ, մատղհաս:
 Եւ խնդրում է ողբագին,
 Որ խնայէ իւր կեանքին,
 Լիճը ձգէ անփսաս:

«Թող, ասում է, թող ապրիմ,
 Ընկնիմ ջուրը, կազդուրուիմ,
 Ուզածիդ պէս գիրանամ.
 Յետոյ նորից կը բռնես,
 Աւելի շահ կը տեսնես,
 Քան թէ հիմա պիտի տամ»:

Բայց նրան ձկնորսը ասաց
 Իր վերջին խօսքը անդարձ,
 Որ վճիռ էր մահաբեր.
 «Ձէ, չեմ թողնիլ, սիրելիս,
 Լաւ է խաշուիս ու եփուիս,
 Թէկուզ փոքր լինիս դեռ»:

Ի՞նչքան տեղին է ասած
 Ժողովուրդն իր մի առած.
 — Հինգ լինի այժմ կանխիկ
 Քան թէ յիսուն ապառիկ:—

1902 ապրիլ 29.

Քարիզ.

Ի Մ Ս ՈՒ Գ Ը

Չեմ ուզում երգել ո՛չ սէր, ո՛չ գարուն,
Ո՛չ կեանք երջանիկ.
Հեծեծում, լալիս, թափում է արցունք
Իմ խեղճ հայրենիք:

Եւ ո՛վ կարող է տեսնել արտասուքն
Իր թշուառ մօրկան
Եւ մինչ յաւիտեան չպահել խոր սուգ,
Սուգ նուիրական:

1901 դեկտ. 14. Թաւրիզ.


Ծ Ե Ր Ե ՈՒ Ն Ը

ԴՐԱՆ առաջ ուրախ-զուարթ
Ճանապարհ էր միշտ դնում
Ծերուկ շունը տիրոջն հպարտ,
Որ դէպի արտ էր գնում:

Անցան օրեր, անհետացաւ
Ուրախութիւնն հէգ տիրոջ --
Տուն-տեղ թողեց ու հեռացաւ
Իր որդոց հետ ու կնոջ:

Բայց ծեր շունը, աչքը ճամբին,
Նստած է դեռ դրան մօտ.
Սպասում է տիրոջ դարձին՝
Անքուն մինչև առաւօտ:

1914 Յոկտ. 4. Ս. Էջմիածին.



۲ ۵ ۱ ۲

ՎՐԻՊԱԿՆԵՐ

(ՍԵՆ ԲՈՒՄՈՒՄԱՆՆԵՐՈՎ ՏՈՂԵՐԸ ԿՏՈՒՆԿԻ ՈՅՐԻՆԻՅԵ)

Էջ	տող	սպումած է	պիտի լինեք
10	7	Ելևէջներըդ	Ելևէջները
12	2	արցունքը աչերիդ	արցունքները աչքիդ
13	9	շողերում	շողերից
15	14	Ողջագուրանք	Ողջագուրանքն
16	4-րդ	տողից յետոյ աւելացնել՝	
		Ո՛ր վ անձանօթ պաշտելի,	
		Ո՛ր վ վաղախոյս ուրուական,	
		Ո՛ր վ յաւիտեան ինձ գերող	
		Քո միակ այն անփոյթ նայուածքով . . .	
16	9	աղեխարշ են	աղեխարշ
20	3-4	իրականութիւններից	իրականութիւնից
22	14	Արևածաղկին	Արևծաղկին
22	6	մարտիկն	մարտիկը
23	7	սիրտըս	սիրտս
28	5	խաւարտչումն	խաւարչումս
29	2	արեգակ	արեգակ,
29	4	դու, անուշիկ,	դու անուշիկ
30	3	որ որպէս	որպէս
30	5	անհոն	անհոն
30	10	դըժգոյն	նուաղ
33	9	Մատղահաս	Մատաղհաս
34	5	անդորրն	անդորրը
35	8-9	ուղղել՝	
		Ինչպէս զեփիւռն է համբուրում, իր շնչովը սիրային,	
		Վարդը քնքոյշ գարնայինս	
36	3	գոկին	գրկին
37	3	Ալֆրէդ դը-Միւսիէ	Ալֆրէդ դը-Միւսէի
39	6	ստուէր	ստուեր

Էջ 80դ	սպուսւծ Է	պիտի լինեք
40	13 Երկրային	Երկնային
42	6 ճամփից	ճանապարհից
45	11 մայրենների	մայրերի
45	1 bruère	bruyère
46	14 դիւցազուններին	դիւցազուններն
48	7 Ժպտում	Թռչում
51	4 ու վարսերդ	վարսերդ
51	8 սպիտազեղ	ասպիտազեղ
52	7 իմ ներբողելու	եմ ներբողելու
52	14 շուշագեղ	շուշանագեղ
52	4 սուսեր որպէսզի	սուսերը, որպէսզի
57	9 շարական	տաղերից
57	6 լուկնայում էի հեռուից:	հեռուից էի նայում լուկնային
61	10 գալի՛	ման գալի՛
62	14 ընդարձակ դրուագ	ընդարձակ դրուածք
65	6 անջքան	անջքան
65	6 բանէ	բանի
65	5 Որ	Ո՞ր
67	6 ծիծաղել,	ծիծաղել,
69	1 Ուստի կրօնից	Ուստի ոչ կրօն
71	8 բաժակին	բաժկին
72	5 Ափզէլ	Ափզէլ
74	2 խառնեբամ	խուռնեբամ
75	3 ու	,
78	7 այն	այդ
80	1 ԱՉՈՒՐՆԵՐԸԴ	ԱՉՈՒՐՆԵՐԸԴ
82	12 սրբութեան	նրբութեան
85	Վերնագրից յետոյ աւելացնել՝ Ալ. Կատակուզէնի	
		Թարգմ. նոր յունարէնից
86	4 արցունք	արիւն

✠✠✠✠✠✠

ԳԱՏՄՈՒԹՅԱՆ 4 ՊՐԻՆՍԻՊՆԵՆ ԿԵՄՏ.
 ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ
 ԵՄԻՍԻՈՒԹՅԱՆ
 ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ

ՀՐԱՏԱՐԸ ԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐ ՊԱՏՐԱՅՑ ԵՆ՝

1. ԾԱՂԿԱԳՐԵՐ ՈՒ ԶԱՐԴԵՐ, (Գիտական - շեղարուեստական ժողովածու), մանրանկարչական հարազատ վերարտադրութիւն հայկական հնագոյն ձեռագրերից, ընդարձակ ուսումնասիրութեամբ հայկական կենդանագրերի ծագման ու զարգացման մասին:
2. ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՁԱԿԱՅՔԻ ՀԱՅՆՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ, (համառօտ նկարագրութիւն և յիշատակարանների լրակատար ժողովածու), վերջում յատուկ անունների ցանկ և օտար բառերի բացարձակ լեզուարանական բացատրութիւններով:
3. ԵՐԻՏԱՅԱՐԴ ՎԵՐՔԵՐԻ ՎՇՏԵՐԸ, Վ. Գէօթէից, թարգմանութիւն գերմաներէնից:
4. ԾԱՂԿԱՓՈՒՆԶ ՀԱՅԸՁՐԾ Լ ՍԱԳԻԻԾ:
5. ՇԱԿՈՒՆՏԱԼԱ (հնդկական դրամա)—Կալիդասայի:



Յանկացողները կարող են դիմել Զուլադստե,
քրտան. շնն., արքււ. Մեսրոպ Մաքսուդիանս
կամ Եաքս, րււտեաւո Եարդեսս Կեղաւանս.

Գ Ի Ն Ն Է 50 Կ 0 Գ.

Գրաւարով գնողներին 20% ԴԵՂԶ.



[20]

ՆՅՈՒԳՉԱԾ Է 1971 թ.



A $\frac{\pi}{67102}$